№ 215 ԿԻՐԱԿԻ, 2 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ

1911
ԵՐԵՍՈՒՆԻՆՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ԿԻՐԱԿԻ, 2 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ № 215

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція „Мшакъ"
Сергіевская ул., № 5.
Tiflis, Rédaction „Mschak"
Խմբագրատան տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզվով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 20 կոպէկ.
Տպարանի տելեֆոն № 67.

ՄՇԱԿ
(39-ՐԴ ՏԱՐԻ)
Հասցէն՝ ТИФЛИСЪ, Редакція „МШАКЪ".
TIFLIS, Rédaction du journal „MSHAK".

Հոկտեմբերի 1-ից մինչեւ տարվայ վերջը 3 րուբլի:

Հասցէն փոխելու համար պէտք է ուղարկել նաեւ հին հասցէն եւ 40 կ. նամականիշ։ ՀԻՆ ՀԱՍՑԷՆ եւ 40 կ. չուղարկողների խնդիրները՝ հասցէն փոխելու վերաբերմամբ՝ ԿԸ ԹՈՂՆՎԵՆ ԱՆՀԵՏԵՒԱՆՔ։

Յայտարարութիւնների համար պէտք վճարել. I երեսի վրա իւրաքանչիւր տողատեղին (պետիտ)—20 կոպ., IV երեսի վրա—10 կոպ.։

Կովկասից դուրս գտնվող անձերի և հիմնարկութիւնների յայտարարութիւնները բացառապէս ընդունվում են՝ Մոսկվայում—Центральная Контора Объявленій Торгов. Дома Л. и Э. Метцль и К-о, Мясницкая, д. Сытова, և նրա բաժանմունքներում—Պետերբուրգում՝ Морская, 11, Վարշավայում՝ Маршальковская, 130, Վիլնօյում՝ Большая, 38, Պարիզում՝ 8 Площадь Биржи.

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ԿԱՄ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

ՄԱՆԻԱ ԵՍԱՅԵԱՆ ԵԱՂՈՒԲԵԱՆՑԸ որդոց հետ և Եսայի ու Նոյեմզարէ Աբովեանցները յայտնում են՝ առաջինը իր թանգագին ամուսնու, երկրորդները իրանց անմոռանալի հօր և վերջինները իրանց սիրելի փեսայի՝ երդուեալ-հաւատարմատար

ԿԱՐԱՊԵՏ ԱՌԱՔԵԼԵԱՆ ԵԱՂՈՒԲԵԱՆՑԻ

անժամանակ մահը, որ տեղի ունեցաւ ծանր և կարճատև հիւանդութիւնից յետոյ։ Յուղարկաւորութիւնը այսօր, առաւօտեան ժամը 10$\frac{1}{2}$-ին, իր բնակարանից (Ртищевская ул., № 11) դէպի Զգրաշէնի եկեղեցին։ Թաղումը Խօջիվանքի հանգստարանում։ 961. 2—2

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԹԱՏՐՈՆ
Երկուշաբթի, հոկտեմբերի 3-ին
ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿ. ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԽՈՒՄԲԸ
Սէզօնի բացման առիթով
ԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆԷ
ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՏՈՒՆ
Դրամա 4 արար., Զուդերմանի, թարգ. Ս. Թառայեանի
Մասնակցում են՝ տ. տ. Ադամեան, Զաբէլ, Ժասմին, Յասմիկ, Սիրանոյշ, պ. պ. Աբէլեան, Ալիխանեան, Ալիխանեան II, Մանուէլեան, Յարութիւնեան, Շահխաթունի։
Սկիզբն է երեկոյեան ճիշդ ժամը 8-ին։
(տ. օ.) տ. 957. 2—2 Ռեժիսոր՝ ԱԲԷԼԵԱՆ

ՀԱՅՈՑ ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Հոկտեմբերի 2-ին, առաւօտեան 11 ժամին նշանակված է Դրամատիկական Ընկերութեան ԱՐՏԱԿԱՐԳ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ Կ. Հ. Բարեգ. Ընկերութեան դահլիճում։
(Аббасъ-Абадская пл. соб. д.)
Ժողովի զբաղմունքի առարկաներն են
ա) Ընտրութիւն պատուաւոր և գործադիր անդամների.
բ) Ընկերութեան գոյութեան 10-ամեակի տօնման հարցը.
գ) Ընտրութիւն վերստուգիչ յանձնաժողովի անդամների և փոխանդամների.
գ) Ընտրութիւն մրցանակաբաշխութեան երկու ժիւրիների անդամների և փոխանդամների.
ե) Ընթացիկ հարցեր։
ԾԱՆՈԹ.—Այս ժողովը կայացած կը համարվի անկախ ներկայ եղող անդամների թւից, որովհետև առաջին անգամ նշանակված էր սեպտեմբերի 25-ին, և չը կայացաւ բաւարար թւով անդամների ներկայ չը լինելու պատճառով։ 959. 2—2
(տ. օ.) տ.

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Շաբաթ, հոկտեմբերի 8-ին, երեկոյեան ժամը 7-ին Կ. Հ. Բ. Ընկ. դահլիճում նշանակված է երկրորդ արտակարգ
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ
ՇԱՐՈՒՆԱԿՈՒԹԻՒՆԸ. Այդ ժողովում պէտք է ընտրվեն վարչութեան համար 2 անդամ, փոխ. անդամ, խմբագրական մասնաժողովի համար 6 անդամ, 3 փոխ-անդամ և վերստուգիչ յանձնաժողովի համար 2 փոխ-անդամ։ 964. 2—1
(2.) տ.

ԱՇԽԱՐՀԻՍ ՎՐԱ ՈՉԻՆՉ ՉԸ ԿԱՅ ԱՆԿԱՐԵԼԻ
ՈՐԸ ԵՒ ԱՊԱՑՈՒՑԵԼ Է ԾԽԱԽՈՏ
20 ՀԱՏԸ 6 ԿՈՊ.
ՍԱԼԻՏԸ
20 ՀԱՏԸ 6 ԿՈՊ.
Առաջինն է ըստ յատկութեան, առողջապահութեան տեսակէտից, [illegible] են միշտ թարմ։
Ընկ. Ա. Ն. ԲՈՂԴԱՆՈՎ եւ Ընկ.
Ներկայացուցիչ Ստեփան Նիկիտիչ Կարապետեանց
10—8 765. Թիֆլիս, Բէհբութեան փող., 37.
(օգ. 27,28, ս. 15,25,27,29, հ. 2,4,6) տ.

ԲԺՇԿԱՊԵՏ
ՎԼ. ԳՐ. ԲՕԺՕՎՍԿԻ
Վերադառնալով արտասահմանից վերսկսեց հիւանդների ընդունելութիւնը։ Ներքին հիւանդ. և բժշկութիւն հիպնոսով։ Ամեն օր, բացի կիրակի օրերից, երեկ. ժ. 6—8-ը։
Крыловская, 7.
տ. (կ.) 820. 10—7

ԲԺՇԿԱՊԵՏ
ՄԻՔ. ԱՂԱՋԱՆԵԱՆ
Մասնագէտ միզասեռական, սիֆիլիս և կաշուի հիւանդութիւնների.
ՎԵՐԱԴԱՌՆԱԼՈՎ
վերսկսել է հիւանդների ընդունելութիւնը՝ ցեր. ժ. 1—4-ը և երեկ. ժ. 7—9-ը։ Միխայլովսկի պր. № 38. Տելեֆոն № 663.
(ե.հ.կ.) տ. 923. 6—5

ԲԺԻՇԿ
Ա. Մ. ՄԿՐՏՉԵԱՆՑ (որդի)
Նախկին ասիստենտ Մոսկ. կ. համալս. կինեկոլ. կլինիկայի. Հրաւիրված է Արմաւիր ծննդկանի համար. Կը վերադառնայ հոկտեմբերի 5-ից ոչ վաղ։ Ընդունել. վերսկսելու օրվայ մասին կը յայտարարվի առանձին։ Տեղեկութիւնների համար դիմել բժ. Մ. Գ. Մկրտչեանցին—Կանանց I հիւանդանոց, Բէբուտովսկայա № 58. տելէֆոն 230.
(կ. ե. գ.) տ. 962. 3—1

ԲԺԻՇԿ
Ռ. Ս. ԴԱՒԹԵԱՆՑ
Ներքին եւ ջղային հիւանդութիւններ
Ընդունելութիւնը (ցերեկվայ ժամը 12—1.
ամեն օր (երեկոյեան ժամը 5—7.
Հասցէն՝ Կոջորբէկովսկայա փող. № 22.
Ելիզավետինսկայա փողոցից՝ № 44 տան անկիւն։
(ե. հ. կ.) տ. 243. 100—75

ФАБРИКИ А. ЭНФІАДЖІАНЦА
ПАПИРОСЫ
„ИНТЕЛЛИГЕНТНЫЯ"
ЦѢНА 25 шт. 15 к. 10 ш. 6 к. 100 ш. 60 к.
ПАПИРОСЫ
ЛЕВЪ
20 шт. 5 коп.
ФАБРИКИ А. ЭНФІАДЖІАНЦА
ПАПИРОСЫ
ЭКСТРА
15 шт. 6 коп.
ФАБРИКИ А. ЭНФІАДЖІАНЦА

662. 100—45 տ. հ. (ե. կ.)

Լոյս տեսաւ
„ԸՆԿԵՐ" № 34.
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
ԵՐԿՆՔԻ ՄՈՒՏՔԸ։ ՄԱՐԴՈՒ ՍԻՐՏԸ 4։ ԿԵԱՆՔ. — Խարդախված ամուսնութիւն։ Ջհուդի համամ։ Թղթախաղի միսիօնարներ։ Ի՞նչ են անում Ռոստովում։ Հասանք և պատուանդան։ Գիւղն է ձեզ կանչում։ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԻՒՆ. — Եւրոպական պարեր։ Դաստիարակութիւն 4։ ՏԱՃԱՐ. — Մեր թատրօնապետներ։ ԲԱՆԱՔՆՆՈՒԹԻՒՆ. — Գրականութեան պատմութիւնը իբրև գիտութիւն։ ՆԱՄԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ։
ԸՆԿԵՐԻ բաժանորդագինն է տարեկան 3 րուբլի։
Խմբագրատունը՝ Աբասաբադսկայա, 10.
Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція «Инкеръ», կամ Tiflis, Rédaction du journal «Inker».
Ամիսը—25 կոպէկ։
Երկրորդ կիսամեակի բաժանորդագինն է 1 ր. 50 կ., № 26-ից։
№ 30-[illegible]
տ. 966. 1—1

ԲԺԻՇԿ
Գր. ՄԱԿԱՐԵԱՆ
Ներքին եւ երեխայոց հիւանդութիւններ
Ընդունում է հիւանդներին իր նոր բնակարանում՝ Գանովսկայա փողոց, տուն Մէյլանովների, № 18, տելեֆոն 615.
Առաւօտեան 12—1 ժամը
Երեկոյեան 5—6 ժամը
(ե.հ.կ.) տ. 819. 100—16

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Ս. Գ. ԿԵՕՆՃԵԱՆ
Ընդունում է ատամի և բերանի հիւանդութիւն ունեցողներին։ Պլոմբ, արհեստական ատամներ իւրաքանչիւրը 1 րուբլի, և այլն։
Աշակերտներին և ծառայողներին 50% զեղչ։
Ընդունելութիւնը առ. ժամը 9—2-ը և 4—7-ը երեկ.
Միքայէլեան փող. № 6, մուտքը պերէուլկայից։
(ե.հ.կ.) տ. 876. 50—10

Ընկճուածութիւնը, գլխացաւը, գլխի պըտոյտ գալը եւ ականջների ձայն տալը—սրանք բոլորը հետևանք են անկանոն մարսողութեան։ ՖՐԱՆՑ-ԻՈՍԻՖԻ բնական դառն ջրի $\frac{1}{2}$ բաժակը առանց որևէ ցաւի վերջ է դնում ստամոքսային խանգարման և դրանով նպաստում է արեան ուժգին հոսման առաջն առնելուն։ «Ֆրանց-Իոսիֆի» ջուրը,—գրում է Միւնխէնից պրոֆ. Ֆօն-Բուլ,—ներգործում է արագ և ընդհանրապէս համի կողմից էլ ճանաչված է դուրեկան։
տ. (M. 199749) 509. 1—1

ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ՇԵՄՔՈՒՄ

I

Ահա հինգ ամիս է, որ կաթողիկոսական թեկնածուների խնդիրը դրված է հրապարակի վրա և նա մինչև այժմ դեռ չէ ընդունել որոշ բնաւորութիւն և արտայայտութիւն։

Այս անգամ ընտրող հասարակութիւնը շատ դժուար կացութեան մէջ զգաց իրան և չը կարողացաւ շուտով պայմանաւորվել այս ու այն անուան վերաբերութեամբ։

Խրիմեանի մահից յետոյ մենք անմիջապէս տուինք Իզմիրլեանի անունը և, որքան մենք հնար ունէինք, առաջ մղեցինք նրա թեկնածութիւնը։

Այժմ դժուար էր իսկոյն մատնացոյց լինել բոլորովին համապատասխան թեկնածուի վրա։

Ճիշդ է, Իզմիրլեանի մահից յետոյ շատ շուտով գծագրվեց կաթողիկոսական ընտրելիների մի ցուցակ, սակայն այդ ցուցակի մէջ յիշատակված անձնաւորութիւնները չէին վայելում այն պատկառելի հեղինակութիւնը, որո՛նք ոգևորում են նրանց ջատագովներին՝ պաշտպանելու հանդէս բերած թեկնածութիւնները և նպաստում են կոչ անելու ընտրող մասսաներին համախմբվելու որոշ անունների շուրջը։

Եթէ հնարաւոր էր և համեմատաբար հեշտ էր փաստաբանել այնպիսի անձնաւորութիւնների համար, ինչպէս էին Վարժապետեան, Խրիմեան, Մելքիսեդէկ, Սեդրակեան, Իզմիրլեան, այժմ դիւրին չէ նոյնը կատարել ներկայ թեկնածուների վերաբերութեամբ։

Հեշտ չէ մանաւանդ այն պատճառով, որ նոյնիսկ այնպիսի խոշոր անձնաւորութիւններ, ինչպէս էին վերջին երկու կաթողիկոսները՝ Խրիմեան և Իզմիրլեան, որոնք վայելում էին համազգային հեղինակութեան հաւաստիացում, այո, նրա՛նք էլ յաճախ անզօր էին հանդիսանում բաւարարութիւն տալու էական ակնկալութիւններին և ուղղելու վարչական դեկը էջմիածնական Սցիլլայի և Քարիբդայի միջև կորովի ձեռնհասութեամբ։

Այդ երևոյթը արդիւնք էր բարդ հանգամանքների, որտեղ դեր էին կատարում թէ էջմիածնական գործունէութեան պայմանները, թէ հայ հասարակութեան մտաւոր ու բարոյական շերտաւորումներն ու պահանջները և թէ կաթողիկոսների իրանց անհատական վերաբերմունքը դէպի ստանձնած բարձր պաշտօնը և դէպի օր օրի վրա նրանց առաջ հանդէս եկող և զբաղեցնող ընթացիկ գործերը։

Էջմիածնի գործողները և հայ հասարակութեան մէջ գոյութիւն ունեցող համախմբումները իրանց կարծիքներն ունէին էջմիածնական գործերի [illegible] տայայտվում էին իբրև լոկ իղձ, հաւանութիւն ու պարսաւանք, և կամ ընդունում էին ներգործական բնաւորութիւն, իբրև գործնական ազդեցութիւն էջմիածնական գործավարութեան մէջ։

Եւ էջմիածինը վերջին 8—10 տարիների ընթացքում կամայ ակամայ հաշիւ էր տեսնում հասարակութեան տրամադրութիւնների և հոսանքների հետ, որոնց մէջ կային թէ առողջ բեղմնաւոր և կազդուրիչ տարրեր և թէ տարամերժ, ցաւոտ և քայքայիչ անպատեհութիւններ։

Կաթողիկոսների հեղինակութեան ույժի որակման համար փորձաքարեր էին էջմիածնական գործունէութեան պայմանները։ Եւ իրականութիւնը ցոյց տուեց, որ այդ փորձաքարերը յաճախ վեր էին էջմիածնական գահակալների ձեռնհասութեան կորովից։

Եւ ահա այժմ, երբ էջմիածնական գործերը պահանջում են զգօնամիտ և բարոյաքաջ ղեկավարներ, հասարակութիւնը դրված է անունների մի ցուցակի առաջ, որոնցից ոչ մէկը չէ վայելում, այնպիսի հեղինակութիւն, որը կենտրօնացնէր իր վրա հասարակական հոգատարների յատուկ ուշադրութիւնը և ոգևորութիւն ներշնչէր պաշտպանելու։ Նրա թեկնածութիւնը այն ջերմ ջատագովութեամբ, որը համբային ընտրելին տալիս է համազգային հմայք, պատկառանք և հեղինակութիւն։

Այդպիսի անձնաւորութիւնների կամ անձի բացակայութիւնը դժուար կացութեան մէջ էր դրել ընտրող հասարակութեանը։ որը և անկարող հանդիսացաւ մինչև այժմ անպայման յանձնարարականներ ներկայացնել այս ու այն թեկնածուի վերաբերութեամբ։

Բայց և այնպէս պէտք է մէկը ընտրվի կաթողիկոս, պէտք է որոշ անունների շուրջը դիզանան քուէներ, որպէսզի մեծամասնութիւն ստացողը նստի էջմիածնական աթոռի վրա՝ ղեկավարելու այդ աթոռի իրաւասութեան և ձեռնհասութեան վերապահված գործերը։

Ա. Քալանթար

ԹՈՒՐՔ-ԻՏԱԼԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

30 սեպտեմբերի

Կ. Պոլիս.—Եկաւ անգլիացի յայտնի հրապարակախօս Ստէդը, որ, այցելելով մինիստրին, առաջարկեց Տրիպօլիսի հարցը յանձնել Հաագայի կօնֆերանսի քննութեան։ Թէև առաջարկութիւնը գործնական նշանակութիւնից զուրկ է, բայց և այնպէս մինիստրը խոստացաւ քննել։

Օսմանեան գործակալութիւնը հերքում է Մակեդօնիայում թիւրքական զօրաժողով կայացնելու լուրերը։

Բ. Դրան բանակցութիւնները մեծ պետութիւնների հետ միջնորդութեան մասին դեռ շարունակվում են։ Սակայն զինադադարի տեղեկութիւնը վաղաժամ է։

Իտալացի ժուրնալիստներին առաջարկվեց մի օրվայ մէջ հեռանալ Թիւրքիայից։

Բ. Դուռը երէկ գիշեր պատասխան ուղարկեց ռուսաց դեսպանատան։ Յիշեալ պատասխանով ազատ ճանապարհ է տրվում նեղուցներում հաց տանող և չէզոք նաւահանգիստները դիմող չէզոք նաւերին։ Իտալիա հասցէագրված հացի բեռները թողնվում են սոսկ այն դէպքում, եթէ նրանք ուղղված չեն Սպէցիայի, Չիվիտտա-Վէկկիայի, Նէապօլի, Տօրէնտօյի, Բարի, Բրինդիզի, Անկօնի, Ստաբիայի, Կատանիայի, Սիրակուզայի պատերազմական նաւահանգիստները, ինչպէս նաև իտալական զօրքին, իտալական իշխանութիւններին և մատակարարներին։

Պատգամաւորների նախնական խորհրդակցութիւնների մէջ պարզվեց, որ օպպօզիցիան, որ ունի առ այժմ 67 ձայն, հանդէս կը գայ կաբինէտի դէմ, ցանկանալով նրա անկումը։

Կոմիտէտական ֆրակցիան դժգոհ է կաբինէտի հաշտարար քաղաքականութիւնից և պնդում է պատերազմը շարունակելու վրա։ Հաւանօրէն կաբինէտը ընտրութիւն է անելու հրաժա[illegible] 1-ին։

—

Հռոմ. — «Դէտ-Պիւբլիկ-Օտտօմանի» վարչութեան վերատեսուչը հեռագրով բողոքեց Ջիօլէտտիին Տրիպօլիսից և Կիրէնաիկէից այդ հաստատութեան հարկահաւաք ծառայողներին արտաքսելու դէմ։ Ջիօլէտտին պատասխանեց, որ իր նախաձեռնութեամբ միջոցներ ձեռք կառնէ, որպէսզի «Դէտ-Պիւբլիկի» արտասահմանեան կրեդիտօրները չը տուժեն։

Ստեֆանին հերքում է լրագրական այն տեղեկութիւնը, թէ իբր Դէռնայի մօտերը տեղի ունեցած կռւում իտալացիները ջարդվել են։

Թիւրքաց կառավարութիւնը հաղորդեց գերմանական դեսպանատան, թէ կը գրաւէ թիւրքական ջրերում կամ բաց ծովի վրա բռնված իտալական առևտրական նաւերը։ Չէզոք պետութիւնների ապրանքները կը գրաւվեն միայն այն դէպքում, եթէ զինուորական կոնտրաբանդ լինեն։

—

Կահիրէ.—Եգիպտոսի կառավարութիւնը արգելեց Պօրտ-Սաիդի քարածխային ֆիրմաներին քարածուխ բաց թողնել կռւող կողմերի առևտրական նաւերին։

—

Տրիպօլիս.—Զօրահրամանատար գեներալ Կանէվան մի կոչով դիմեց ազգաբնակութեան, որի մէջ մատնանշում է՝ թէ նա ուղարկված է նրա համար, որպէսզի մինչև օրս թիւրքական ստրկութեան մէջ եղող ազգաբնակութեանը տայ ազատութիւն և պատժէ նեղողներին։ Տրիպօլիսը իտալական թագաւորի պաշտպանութեան ներքոյ կը մնայ իսլամի երկիր։

Առաջին գումարտակը բաղկացած էր ուժեղ հետևակ գնդից, մի քանի հեծելազօրից, հրացանաձիգ վաշտից և բեռնատարներից։ Ռազմամթերքները և պաշարը առատ են։

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

(Պետերբուրգի Հեռ. գործ.)

30 սեպտեմբերի

Պետերբուրգ.—Պաշտօնական կարգադրութիւն ուղարկվեց Ֆինլանդիա՝ խստագոյնս քննութիւն կատարել և պարզել, թէ արդեօք ճի՞շդ է «Новое Время»-ում սեպտ. 27-ին տպված այն տեղեկութիւնը, թէ օգոստոսամսին ֆինները քարուքանդ են արել Սօմովէց կղզում գտնվող ուղղափառ վանքը։

Ծովային մինիստր Գրիգորովիչը դարձաւ ծովակալ։

Կովկասից վերադարձաւ միտրոպոլիտ Անտօնին։

—

Լօնդօն.—Րէյտէրին հաղորդում են Մալտայից, որ Տրիպօլիսում խօլերա է. արդէն չորս մահվան դէպք է եղել։

—

Պարիզ.—Արտաքին գործերի մինիստր Դեսէլվը ներկայ եղաւ բիւջէտային մասնաժողովի մէջ։ Պատգամաւոր Պիօւն առաջարկեց, որպէսզի մասնաժողովը երկիւղ յայտնէ մինիստրին Կոնգօյի տէրրիտօրիալ վարձատրութիւնների առիթով։ Դեսէլվը պատասխան չը տուեց, որովհետև շուտով պարլամենտին հնարաւորութիւն կը տրվի դատել այդ մասին համաձայն ստացված հետևանքների։

Հավասին հաղորդում են մարօկկեան աղբիւրից, որ Սէլուան դիրքի վրա յարձակվեցին 500 ձիաւոր։ Սպանացիները մեծ պարտութիւն կրեցին։ 1000 մարդ գլխատված է։

—

Վիէննա.—Պալատ։ Շարունակվում են կենսական մթերքների թանգութեան մասին սկսված վիճաբանութիւնները։ Նիստի վերջը պատգամաւոր Գէյլինգը հանդէս եկաւ Վիէննայի լրագիրներից մէկում լոյս տեսած իտալատեաց յօդուածի դէմ, բողոքեց դաշնակից Իտալիայի վրա յարձակումներ գործելու դիմաց և պահանջեց, որպէսզի մինիստր-նախագահը հանգըստացուցիչ հաւաստիացումներ տայ արտաքին քաղաքականութեան վերաբերեալ։

—

Սօֆիա.—Մինիստրների խորհրդի նիստում մինիստրներից մինը յայտնեց, որ Բօլգարիան շարունակում է հաստատ չէզոք մնալ ու մտադիր չէ ոչ մի ռազմի միջոց ձեռք առնել Թիւրքական սպառազինումների դէմ։ Յուսալով մեծ պետութիւնների և Բ. Դրան վստահացումներին, կառավարութիւնը կը գործէ դիպլօմատիական ճանապարհով։ Զօրաժողով չի լինի։ Թիւրքիան երբէք չի վստահանայ յարձակվել Բօլգարիայի վրա։ Անհանգստութիւն յարուցում է միմիայն զօրքերի խտացումը, որ ստեղծել է գրգռված տրամադրութիւն, որպիսին կարող կը լինի ապագայում ակամայից անցանկալի

Լիսաբօն.—Զինուորական մինիստրը հրամայեց լեռնային թնդանօթաձիգ վաշտերին շարունակ առաջ խաղալ Մինիօ և Տրասօս-Մօնտէս նահանգներում։

—

Կանէա.—Պատգամաւոր Տսունիսը յայտնեց Պետ. Գործակալութեան թղթակցին, որ օպպօզիցիան փորձեց համաձայնութիւն կապել կառավարութեան հետ, բայց չը կարողացաւ համաձայնել խառն կաբինէտ կազմելուն, գտնելով որ միայն գործունեայ կաբինէտը ընդունակ է կազմել հաստատ և ուժեղ իշխանութիւն։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ՇՈՒՐՋԸ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

30 սեպտեմբերի

Թէհրան.—Մէջլիսը 73 ձայնից 63-ով ընդունեց զինուորական մինիստրութեան առաջադրութիւնը՝ շուէդացի օֆիցէր հրաւիրելու մասին զօրքի և զինուորական վարչութեան վերակազմութեան համար։

—

Ուրմիա.—Յեղափոխականները թռուցիկով խիստ քննադատելով նահանգապետի անգործունէութիւնը՝ նրանից պահանջում են 3 օրվայ ընթացքում կամաւորների խմբեր կազմակերպել Սամադ-խանի դէմ գնալու համար, սպառնալով հակառակ դէպքում իրանք դրամներ շորթել այդ տեսակ խմբեր կազմակերպելու համար։

Արժանահաւատ աղբիւրից հաղորդում են, որ Թիւրքիայից ուղարկված են 10 էսկադրօն հեծելազօր գրաւված պարսկական շրջանների սահմանապահ ծառայութեան համար։ Թիւրքերը Կուշչիի լեռնանցքը գրաւելու նպատակով, որ ռազմագիտական նշանակութիւն ունի Ուրմիա-Սալմաստ ճանապարհի վրա, ամեն կերպ նեղում են Կուշչիի և Բարի գիւղերի բնակիչներին։ Վերջին օրերս բնակիչները քանիցս ենթարկվեցին շէկակ ցեղի քիւրդերի կողոպտման և դիմեցին նահանգապետին, խնդրելով անյապաղ պաշտպանութիւն և սպառնալով հրաւիրել Թիւրքերին։

—

Շուշի.—Պարսից մի աւազակախումբ յարձակվեց Քեբէըլի, Ղարադաղլի և Թէգլի քօչւորների վրա և քշեց 40 գլուխ տաւար, 27 ձի և 6 ուղտ։

Սահմանապահ պահակախմբի օֆիցէրը անցաւ Արաքսով Պարսկաստան և հրացանաձգութիւնից յետոյ յետ խլեց անասունը։ Աւազակախումբը հեռացաւ ձիերով և ուղտերով։

ՅՈՒԶՄՈՒՆՔՆԵՐԸ ՉԻՆԱՍՏԱՆՈՒՄ

(Պետերբուրգի Հեռ. Գործ.)

30 սեպտեմբերի

Խանկօու.—Սկսեցին յեղափոխականների կողմն անցնել լօյալ նաւերը։ Հրդեհումները խիստ պատժվում են։ Գլխատվեցին 5 հրդեհիչներ։ Յեղափոխականները հրդեհում են միայն իշխանութեան և մանդարինների շինութիւնները։ Ամեն օր լինում են հրդեհումներ ու հրացանաձգութիւն։

Ուչանֆուի ռմբակոծութիւնը չինական լօյալ նաւերից դադարեց օտարազգի յածանաւերի պահանջով։

—

Պէկին.—Զօրախաղերը յետաձգվեցին Ինդլինֆուի նահանգում։ Ամեն օր արտակարգ գնացքներով զօրքեր են ուղարկվում Խուբէյ։ Մայրաքաղաքում ձեռք են առնված պաշտպանողական խստագոյն միջոցներ։ Տեղեկութիւններ [illegible] Խունանի նահանգի Գանշաֆու քաղաքը շրջապատված է ապստամբներով։ Ուչանֆուում ժամ. կառավարութեան գլուխ է կանգնել նախկին օֆիցէր՝ յայտնի յեղափոխական գործիչ Խուանսինը։

ՎՈՍՓՈՐԻ ԱՓԵՐԷՆ

Հակկը փաշա տապալած

I

Կ. Պօլիս, 20 սեպտեմբեր

Դէպքերը գահավէժ կընթանան։ Վերջնագիրին յաջորդեց պատերազմի յայտարարութիւնը և արդէն թնդանօթներ գոռալ սկսած են։ Իտալիա օսմանեան պետութեան մէկ ընդարձակ նահանգը գրաւել փորձելէ զատ իր նաւատորմիղով կը հետապնդէ օսմանեան նաւատորմիղը և Ադրիականի եզերքը՝ Պրեվէզայի ամրութիւնները կը հարուածէ։

Այս անակնկալը բոլորովին շփոթութեան մատնած է օսմանեան կառավարութեան վարիչները, որոնք չեն գիտեր թէ որու դիմեն։

Հակկը փաշա, որ կարծես գիտակցաբար դաւաճանեց հայրենիքի շահերուն դէմ և յարեցաւ գերման քաղաքականութեան, այսօր թաւալգլոր կիյնայ թերևս անկանգնելի կերպով։

Պատերազմը որչափ որ ալ վնասակար ըլլայ իր հետևանքներով բոլոր երկրին համար, և որչափ որ հայերը իբր առևտրականներ, գործի աշխարհի մարդիկ, դրամատէր-սեղանաւորներ, չարաչար պիտի տուժեն տնտեսապէս, և իբր զինուոր կեանքի զոհեր տալով, սակայն հայ ազգին ընդհանուր շահերուն տեսակէտովը խորհելով՝ հայք կը նպաստաւորուին այս պատերազմէն, զի հայոց հակառակորդ և կեղծաւոր բարբար ազգին քծնող վարչապետը՝ Հակկը փաշա թաւալգլոր կը գահավիժի իր բարձրութենէն։ Հակկը փաշա այն անձն է, որ իր վարչապետութեան կոչուելէ անմիջապէս յետոյ 1910 թ. յունուարի առաջին եօթնեակին մէջ, Դուրեան պատրիարքի հրաժարականը յետս կոչել տալու համար, լուր խրկեց թէ՝ «Թող մէկ անգամ իրեն դիմում ընէ, եթէ անիկա մէկ ուզէ՝ ինքն երկուք պիտի տայ»։ Սակայն Հակկը փաշա Դուրեան պատրիարքին նուաստացուցիչ դարձէն յետոյ բան մը չըրաւ իր խոստումը արդարացնող։ Հակկը փաշա նոյն հաւատքը ընծայեց Մանկունի արքեպիսկոպոսին և դարձեալ ոչինչ ըրաւ և ոչ մէկ գոհացում չտուաւ հայոց։ Ընդհակառակը, իբր համբաւաւոր համիդական և անոր քաղաքական դաւանանքներուն խորապէս գիտակ, անոր ամենէն սիրական գաղափարը, ի վնաս հայոց քիւրդերը շփացնելու ծրագիրը, գործադրեց և քաջալերեց քիւրդերը՝ աւարառութիւններ, սպանութիւններ և բռնութիւններ գործելու, այնպէս որ իր վարչապետութեան միջոցին քիւրդերը ըսկան սանձարձակ գործել, իբր թէ համիդեան ըէժիմին տակ գտնուած ըլլային։

Համիդի պէս ստախօս, անոր պէս ձըգձգող, խոստացող՝ առանց գործադրելու միտք ունենալու, հայոց համար արտասովոր կերպով վնասակար եղաւ իր պաշտօնավարութիւնը, որուն շրջանին մէջ Հայաստանի մէջ վերստեղծուեցաւ այն կացութիւնը, որ տիրապետող էր սահմանադրութենէն առաջ։

Հետևաբար առանց պատերազմին ապագայ ընթացքէն հայոց կրելիք մեծ վնասները աչքի առջև ունենալու՝ հայերը այսօր ուրախ են Հակկը փաշայի խայտառակ ու նուաստացուցիչ անկումը տեսնելով։

Հակկը փաշայի հետ՝ հայերը կը յուսան թէ վերջ պիտի գտնէ իր համիդեան քաղաքականութիւնը և հակահայ միտումը՝ կառավարական շրջանակներու մէջ։ Ամենամեծ ուրախութիւն պատճառեց հետևա- [illegible] թեան արժանի դառնալը և ժողովրդային նախատանաց առարկայ ըլլալը։

Ազգային տեսակէտով ասիկա առաջին շահն է հայոց համար և ասիկա շատ աննշան բան մը չէ, եթէ արդարև իրականանայ այն յոյսը, թէ Հակկը փաշայով կը վերջանայ իր այս մոլոր ուղղութիւնը։

Հայոց ճակատագրին վրայ այս պատերազմը կազդէ նաև ուրիշ կերպով մը։

Հայաստանի վիճակի մէջ բարւոքում մը առաջ բերելու յոյսեր կը բերէ մեզի։

Երիտասարդ-Թիւրք խայտառակուած ու տնանկ կառավարութիւնը, որ ամեն ինչ ըրաւ դժգոհ ձգելու համար պետութեան բաղկացուցիչ տարրերը, հիմա տեսնելով Եւրոպայի հակակիր և պաղ վերաբերումը հանդէպ Թիւրքիոյ,—որ կը ձգուի իր ճակատագրին,—խորապէս ազդուած են և մանաւանդ սարսափներ կանցնեն, մտածելով թէ Իտալիոյ գործողութիւնները առաջաբանն են միահամուռ յարձակման մը, որ պիտի գործադրուի Թիւրքիոյ դէմ՝ պետութիւնը բաժան-բաժան ընելու համար։ Ասոր համար խիստ վերապահութեամբ մը չեն ուզեր տեղի տալ արտաքին միջամտութեան։ Հետևաբար Ալբանիոյ, Մակեդոնիոյ և Հայաստանի մէջ Թիւրքիոյ վարիչներուն գործելակերպը շրջափոխելու պէտք կը ներկայանայ։ Ալբանիա իբր աւստրիական, Մակեդոնիա՝ բուլղարական և Հայաստան՝ ռուսական յաւակնութեանց ենթակայ երկիրներ՝ ամենէն աւելի ուշադրութեան առարկայ կըլլան և արդէն գոյութիւն ունեցող աղէտը նոր բարդութեամբ մը աւելի չծանրացնելու համար՝ օսմ. պետութիւնը պիտի ստիպուի բուլղար, աւստրիական և մանաւանդ ռուս սահմանագլուխի մերձաւոր կէտերու մէջ անդորրութեան պահպանութեան ուշադիր ըլլալ։

Հետևաբար պատերազմին բոլոր տևողութեան միջոցին Հայաստանի մէջ վիճակի և կացութեան փոփոխութիւն և դէպի լաւը յեղաշրջում մը յուսալի է և ամենահաւանական։

Օսմ. կառավարութիւնը կը կարծուի, որ այլևս չպիտի թոյլատրէ քիւրդերու յայտնի համարձակ աւարառութիւնները և այլ ոճիրները, պատրուակ չստեղծելու համար Ռուսիոյ, որ աւելի տրամաբանական զեկուցագրով մը Իտալիոյ օրինակին չհետևի վեց նահանգներու օսմ. զինուորներէ դատարկմանը պահանջելով։

Ասով հայք գէթ առժամապէս հարստահարութիւններէ ազատ պիտի մնան և պահ մը ազատ շունչ պիտի առնեն։ Այս առթիւ, եթէ հայք գիտնան առիթը շահագործել, թերևս հողային խնդիրն ալ աւելի կամ պակաս նպաստաւոր կերպով լուծում մը գտնէ։

Ասիկա ալ պատերազմէն հայոց քաղած երկրորդ օգուտն է, որ բաւական երկայրի հանգամանք ունի, զի կրնայ հայոց կողմէ ունէ անխոհեմութիւն, գրգռիչ ընթացք՝ ճիշդ հակառակ արդիւնք տալ և առաջ բերել նոյն իսկ հայկական կոտորածներ։

Մինչև հիմա երևոյթները մեզի համոզել կը միտին, թէ օսմ. կառավարութիւնը կը զգայ Ռուսիոյ հետ խնդիր ունենալէ և ասոր համար է, որ Իսմայիլ Հակկը-բէյը, Բիթլիսի կուսակալը, որ քիւրդերը պատժելու համար իր ըրած դիմումներուն ապարդիւն մնալը տեսնելով իր պաշտօնը լքած և Կ. Պօլիս եկած էր, հրաման ստացաւ վերադառնալ անմիջապէս իր պաշտօնատեղին, լիազօր իրաւունքով և խոստում առնելով, թէ բացարձակ իրաւամբ պիտի պատժէ Խոյթի ծանօթ ոճիրին հեղինակները, զորս ոչ թէ պատժել, այլ նոյն իսկ հետապնդել թոյլ չէր տար Հակկը փաշայի խայտառակ դահլիճը։ Այս նպաստաւոր առիթը շահագործել գիտնալու ճարտարութիւնը արդեօք պիտի ունենան հայերը. ասիկա բաւական կասկածելի է։ Ամեն պա- [illegible] րեշրջման յոյսը չեկրնար աննշմար թողուիլ։

Շառայլ

ԿԻԼԻԿԵԱՆ ԽԱԲՐԻԿՆԵՐ

Մերսին, 12/25 սեպտեմբեր

◆ Քանի մը օր առաջ Մերսինի նաւահանգիստը անսովոր ոգևորութիւն մը կար։ Սովորաբար՝ շատ-շատ 2—3 շոգենաւ ընդունող այս նաւահանգիստը պատիւ ունեցաւ օսմանեան նաւատորմի այցելութեան։

Նաւատորմը, մօտ 10 մեծ ու փոքր զրահաւորներէ բաղկացած, 4—5 օր Մերսին մնաց։ Ծովակալ փաշան ընդունեց կուսակալին և կուսակալութեան զինուորական ու քաղաքային պաշտօնէից այցելութիւնը։

Եւ մինչ իրիկունները նաւատորմին նուագածուներուն խումբը զօրանոցին մէջ նուագելով ժողովուրդը կը զբօսցնէր, անդին զրահաւորներն ևս ելեքտրական լուսարձակներով չտես ժողովրդեան աչքին «լուսաւոր» համայնապատկեր մը կը պարզէին։

Երանի թէ փոխանակ այդպիսի ոչինչ և վնասակար ցոյցերու, որոնք ռամիկ ժողովրդեան զգացումները գրգռելէ զատ բանի չեն ծառայեր, կառավարութիւնը գիտնար ուղիղ և անաչառ արդարութեան իրական լոյսը սփռել և ցոլացնել արդարութեան կարօտամաշ երկրին վրայ, որ միայն ազգերու զօրութեան իրական հիմը կրնայ կազմել, ուրիշ ամեն ցոյց ու ձևերէ աւելի։

Օսմանեան նաւատորմը ասկէ Իսքէնդէրուն մեկնեցաւ։ Ինչպէս յայտնի է, այս պտոյտը կըլլայ մասնաւոր հրահանգով մը կրետական խնդրոյն պատճառաւ։

Օսմանեան նաւատորմին մեկնելէն քանի մը օր վերջ, Մերսին եկաւ նոյնպէս ռուսական զրահանաւ մը և միւս օրը գնաց։

◆ Հայաստանի կողմերը երկար ժամանակ աշխատած և բիւրաւոր թշուառութիւնք ամոքած բողոքական միսիօնարուհի միս Էֆֆի Ջէմբըրս որ Տրապիզոնէն, Եդեսիայէն ետքը իր ծերութեան օրերուն Բէսապ փոխադրուած էր, անխտիր բոլոր հայերուն ճշմարիտ օրհնութիւն մը հանդիսանալով, վերջերս ստիպուած թողած է իր գործը և Անգլիա մեկնած։

Իր անխտրական ոգին, իր հայամօտ վերաբերութիւնը և իրեն ղրկուած նպաստի դրամներուն առանց զանազանութեան բաշխումը ծանր անհամաձայնութիւններ և ատելութիւն մը ծնեցուցած էր իր դէմ։ «Րահնիմայական» բողոքական յետադէմ և մայրհամայնքին հետ բարւոք յարաբերութեանց ոխերիմ թշնամի խմբակը չէր կրնար տոկալ, որ Հայաստանէն եկող և հայերը անխտիր ճանչնալով սիրող միս Ջէմբըրսի նման անձնուիրութիւնք բողոքականութեան ծոցին մէջ սկսուած նոր և հայրենական ուղղութեան ույժ և զօրավիգ դառնան։ Խմբակ մը, որ այս տարուայ, Մարաշ գումարած, բողոքականաց տարեկան «միութեան» (?) մէջ, հայոց հետ զպրոցական համերաշխութեան խնդիրը ջուրը ձգելու համար չվարանեցաւ հայ-լուսաւորչականքը հրապարակաւ անուանել անկրօն, անբարոյ և անարժան համախոհութեան։

Կերթայ միս Ջէմբըրս, որ Բէսապի այբացաւեր և կոտրեալ հայութեան համար ճշմարիտ և առանց յետին միտքերու՝ բարերար մըն էր, ինչպէս որ քշած էին Մարաշէն դպրոցական համերաշխութեան սիւնն եղող մր. Մաքալէմը, ինչպէս որ հոգին բերանը բերած էին վաղամեռիկ մր. Ալէնին, որուն ազգաշէն գործը քանդելու համար հիմնեցին «Րահնիմա»ն, համերաշխութեան սկսնակ փորձերը քանդելու և երկու քոյր հասարակութեանց մէջ խրամատը լայնցնելու համար....

Բէսապի հայոց կրթական գործը յիշեալ յարգելի միսիօնարուհիէն դրական անմոռանալի բարիքներ տեսած ըլլալուն, իր [illegible]

Յիշեալին տեղը պիտի գայ, կըսեն, Այնթապի բողոքական միսիօնարութեան աղջկանց սեմինարիայի տնօրէնուհին։

Մի-նա

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ՍԵԶՕՆԻ ԲԱՑՄԱՆ ԱՌԻԹՈՎ

Հոկտեմբերի 3-ից բացվում է հայ թատրոնի ներկայ 1911—12 թ. թատերաշրջանը։ Հայոց Դրամատիկական Ընկերութեան կազմած դրամատիկական խումբը երկուշաբթի օր, ամսիս 3-ին, առաջին անգամ հանդէս կը գայ թատերասէր և մայրենի բեմին նախանձախնդիր հասարակութեան առաջ «Հայրենական տուն» յայտնի պիէսի մէջ։

Ներկայ թատերաշրջանը աչքի է ընկնում նախկիններից նրանով նախ, որ Թիֆլիսում են կենտրոնացած մեր դերասանական աշխարհի գրեթէ բոլոր յայտնի ոյժերը, բացառութեամբ Զարիֆեանի, որը կամովին հրաժարվեց այս տարի դրամատիկական խմբում լինելուց, որովհետև վճռել է մեկնել Ռուսաստան բեմական արուեստի մէջ

ՖԷԼԻԷՏՕՆ

ԹԷ ԻՆՉՊԷՍ ՊԷՏՔ Է ԼՈՒԾԵԼ ԿԱԹՈՂԻԿՈՍԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ

Հայ ժողովրդի կեանքը, եթէ հաւատանք անցած շաբթին Կովկասում լոյս տեսնող թերթերին, կենտրոնացած է եղել կաթողիկոսական պատուիրակներ ընտրելու մէջ։

Չը գիտեմ, ինչպէս են անցել այդ ընտրութիւնները ուրիշ քաղաքներում, բայց Աստրախանում ոչ միայն պատուիրակներ են ընտրել, այլև կաթողիկոսը։

Դուրեանը՝ 13 ձայնով, Օրմանեանը՝ 5, և որովհետև ժողովը վճռել է ընդունել ձայների մեծամասնութիւն ստացողին՝ ուստի և Աստրախանի թեմի ամենայն հայոց կաթողիկոս հրատարակված է՝ Դուրեան Եղիշէ առաջինը։

Գալով Մոսկվային, նա, ճիշդ է, կաթողիկոսի ընտրութիւն չէ արել, սակայն բժ. Ս. Շահ-Նազարեանին ընտրելով պատուիրակ՝ դրանով Մոսկվան իրան համար կաթողիկոս է ընտրել Օրմանեան Մաղաքիա առաջինին։

Ընտրութիւններ եղել են նաև Վաղարշապատում, ուր պատուիրակ ընտրվել է Մ. Աբեղեանը, և որովհետև այդ պատուիրակը Կարապետ եպիսկոպոսի ամենամօտ ընկերն է, ուստի մի բոպէ անգամ չենք կասկածում, որ Վաղարշապատի կաթողիկոս հռչակվելու է Կարապետ առաջինը։

Մնում է Թիֆլիսը. սրա ընտրութիւնները լինելու են առաջիկայ շաբթում. բայց որքան որ ինձ յայտնի է զանազան տրամադրութիւններից՝ Թիֆլիսը մեծամասնութեամբ ձայնից կընտրի Մեսրոպ 1-ին Տէր-Մովսիսեանին։

Երևանը անպայման իր առաջնորդ Խորէն առաջին Մուրադբէգեանին, իսկ Պարսկաստանը Նոր-Ջուղայով կաթողիկոս կը հրատարակի Բագրատ առաջին Վարդազարեանին։

Եւ որովհետև այդ վեց կաթողիկոսներից ոչ մէկն էլ առանձին առանձին մի իսկական կաթողիկոսի տեղ չեն բռնի, ուստի և մենք հրապարակի վրա կունենանք 6 կաթողիկոս։

Եղիշէ I, Մաղաքիա I, Կարապետ I, Մեսրոպ I, Խորէն I և Բագրատ I.

Կամ, ուրիշ խօսքով, կունենանք մի ամբողջ կաթողիկոսութիւն, բոլորն էլ առաջին համարով, բոլորն էլ հայ եկեղեցու ողջ պատմութեան համար նոր և հետաքրքրական։

Եւ ահա ես մտածում եմ. մի՞թէ, իրօք, չէ կարելի դրանց բոլորից կազմել մի միացեալ կաթողիկոսութիւն, որի ժամանակ՝

Դուրեանը կը լինի բանաստեղծութեան և երևակայութեան կաթողիկոս։

Օրմանեանը կը լինի արտաքին գործերի կաթողիկոս։

Կարապետը իր բարձր հասակի և յաղթանդամութեան պատճառով՝ դուրս բերելու, կամ, ինչպէս ասում են, մէյդանի կաթողիկոս։

Մեսրոպը՝ լուսաւորութեան կաթողիկոս։

Խորէնը՝ ճանապարհների հաղորդակցութեան կաթողիկոս։

Իսկ Բագրատը՝ ներքին գործերի կաթողիկոս։

Եւ դրանով առանց ղալմաղալի ամենահրաշալի կերպով կը լուծվի մեզանում կաթողիկոսական կնճռոտ հարցը։

Հարցի այդ կերպ լուծումը կունենայ այն առաւելութիւնը, որ ողջ հայոց ազգի մէջ միանգամից կը տիրի սէր ու խաղաղութիւն։

Այսպէս, օրինակ, պօլսեցի ազատականը, դիցուք հէնց ինքը Շահրիկեանը, կը համբուրվի Ս. Զէրքէզեանի հետ, Հ. Առաքելեանը՝ Լէօյի, Երուանդ Տէր-Մինասեանը կը գրկախառնի Մեսրոպ աւ.-ք. Մելեանին, Միւրդաշխիւրը «Բրուդերշաֆտ» կը խմի Յովհ. Թումանեանի հետ, համբաւաւոր գրող և հրապարակախօս Դօշոյեանը կանցնի թևանցուկ Կատոնի հետ, համբաւաւոր բժշկապետ Կաճկաճեանը կը խանդաղատվի տէր-Եզնիկի հետ, Բիշմիշեանը իր գործերը կը յանձնի համբաւաւոր փաստաբան Գ. Խատիսեանին, Պապունին ողջոյնի հեռագիր կուղարկի բժ. Ս. Շահ-Նազարեանին, Երևանի պատգամաւոր Գ. Ահարոնեանը սպիտակ քուէ կը տայ Հ. Խուդաբաշեանին, և այլն, և այլն։

Եւ ահա այդ օրը, ընթերցող, կը լինի հայ ազգի և հայ եկեղեցու համար մի չըտեսնված տօն. բոլորը կը դառնան մի հօտ և մի հովիւ. Էջմիածնի զանգերը ստատուելով կը ղօղանջեն, Մասիսը իր գլուխը կը հանի ամպերի տակից, արեգակը կը լուսաւորի մեզ ժպտով ու ծիծաղով. և համայն ազգի արտասուքների ու ուրախութեան աղաղակների տակ Իջման Սեղան կը մտնի հայ հոգևորականութիւնը և հայ ժողովուրդը, ունենալով իրանց առաջ հայ սրտի, հանճարի, լեզուագիտութեան, քաղաքականութեան, բարեպաշտութեան և գիտականութեան ողջ հիւթը՝ յանձին 6 նորընտիր կաթողիկոսների, որոնց գնացքը առաջ կը գնայ հետևեալ կարգով։

Ամենից առաջ կը գնայ ամենակարճլիկ կաթողիկոսը՝ Բագրատ I-ինը։

Երկրորդը կը լինի ամենաբօյով կաթողիկոսը՝ Կարապետ I-ինը։

Երրորդը ամենակլոր կաթողիկոսը՝ Օրմանեան Մաղաքիան։

Չորրորդը ամենամաղոտ և թաւ կաթողիկոսը՝ Մեսրոպը։

Հինգերորդը ամենաերազող և ոտանաւորներ գրող՝ բանաստեղծ կաթողիկոսը՝ Դուրեան Եղիշէ I-ինը։

Իսկ բոլորից վերջ, ամբոխի մէջ թաղնըված, կը գնայ ամենաչնչոտ կաթողիկոսը՝ Խորէնը։

Ահա այդտեղ բոլորը ծունկ կիջնեն, կաղօթեն և միմեանց կը համբուրեն։

Ժողովուրդը կը գոռայ՝ կեցցէն 6 կաթողիկոսունք։

Կեցցէ սէր ու միաբանութիւն։

Կեցցէ հայ վերածնութիւն։

Եւ ապա, մէկը միւսին կաթողիկոս ձեռնադրելուց յետոյ, նոյն հանդէսով դուրս կը գան և կը գնան նոր վեհարան։

Ահա այդտեղ է, ընթերցող, որ կախը կընկնի մեր 6 հայրապետների մէջ, քանի որ վեհարան շինող ճարտարապետներից և ոչ մէկը նախատեսած չը լինելով այսպիսի պատահ, շինել են միայն կաթողիկոսական մի ննջարան և այն էլ ոչ շատ մեծ։ Ուստի եթէ որևէ թիւրիմացութիւն ծագի 6 հայ կաթողիկոսների մէջ, այդ կը լինի այն՝

Թէ դրանցից որը ամենից երկար, յարմար և հանգիստ քնի։

Բայց դա այնքան սովորական է կաթողիկոսական գահի վրա վերջերս նստողների համար, որ դա կը լուծվի, երևի, այսպէս.

Բոլոր 6 կաթողիկոսները կը քնեն մեծ դահլիճում միասին։

Եւ դրանով մի անգամ ընդմիշտ լուծված կը լինի կաթողիկոսական ներկայ պայքարը՝ ի մեծ ուրախութիւն Գէորգ արքեպիսկոպոս Սուրէնեանի, որը և կը մնայ կաթողիկոսական անփոփոխելի տեղապահ ու կը կառավարի գործերը...

Սալ-Մանի

կատարելագործվելու համար։ Երկրորդ՝ որ ներկայ թատերաշրջանին Թիֆլիսում տըրվելու են այնքան ներկայացումներ, որքան անցեալ ոչ մի թատերաշրջանին չէ տրված. ներկայացումներ են լինելու Արտիստական թատրոնում շաբաթը երկու անգամ՝ երկուշաբթի և հինգշաբթի (նոյեմբերից) օրերը. Զուբալովեան ժողովրդական Տան թատրոնում այս տարի տրվելիք ժողովրդական ներկայացումների թիւը կրկնապատկվել է. տրվելու են նաև ներկայացումներ ժողովարանում և Հաւլաբարի կլուբում։

Ներկայ թատերաշրջանի համար կազմակերպված դրամատիկական խմբի մէջ չը կան Արմէնեան ամուսինները, որոնք անցան Զուբալովեան Տունը, բայց հրաւիրված է տ. Սիրանոյշը, որի լինելը խմբի մէջ շատ ցանկալի էր համարվում հէնց անցեալ տարվանից, սակայն միայն այս տարի հնարաւոր եղաւ նրան հրաւիրելու։

Դրամատիկական խմբի կազմն է. դերասանուհիներ՝ Ազամեան, Գուլազեան, Զաբէլ, Ժասմէն, Խանդանեան, Մայսուրեան, Ցամիկ և Սիրանոյշ. դերասաններ՝ Աբէլեան, Ալիխանեան, Ալիխանեան երկրորդ, Աւետեան, Լաքա, Ղազարեան, Մամիկոնեան, Մանուէլեան, Միրզոյեան, Ցարութինեան, Շահխաթունի, Սևումեան, Տէր-Առաքելեան և Փիրումեան։

Վերոյիշեալ ցուցակը ցոյց է տալիս, որ Դրամատիկական Ընկերութեան վարչութիւնը կենտրոնացրել է իր կազմած դրամատիկական խմբի մէջ մայրենի բեմի հին գործիչներին և նոր ոյժեր։

Ներկայ թատերաշրջանի առաջին կիսի ռեպերտուարն է. ինքնուրոյն՝ Շիրվանզադէի «Նամուս» և Վաստակաւորի «Պատրանք» (Մեռելները խօսում են) պիէսները. թարգմանական՝ «Կենդանի դիակ», «Բրանդ», «Կառուցանող Սօլնէս», «Վերաքննիչ», «Աղքատութիւնը արատ չէ», «Ովկիանոսից դէնը», «Սէր և Մահ», «Խելակորոյս», «Կեանքի ճանկերում», «Միսսիայի վերջը» և այլն։

Թատրոնի գործը մեզ մօտ, ինչպէս յայտնի է, շատ է կաղում, դրա գլխաւոր պատճառը հասարակութեան անտարբերութիւնն է, որ ուղղակի մեռցնում է նրան։ Ի՞նչ ցանկութիւն կարող է լինել գործելու, ինչ խրախուսանք է թէ դերասանին և թէ թատերագրողին, երբ թատրոնը լինում է դատարկ, երբ հայ հասարակութիւնը սիրում է միայն պահանջել, քննադատել և ուսցնել այս կամ այն գործի պակասաւոր կողմերը, որպէսզի արդարացնէ իր քար անտարբերութիւնը մայրենի բեմին ու իր բացակայութիւնը թատրոնում։

Ամենից առաջ հարկաւոր է, որ հասարակութիւնը յաճախէ ներկայացումներին, նիւթապէս պահպանէ թատրոնը և ապա պահանջներ դնէ։ Զէ որ լաւ թէ վատ մի մայրենի բեմ ունենք և պարտաւոր ենք ամեն կերպ նպաստել նրա ծաղկման, այլ ոչ թէ սպասենք, որ մեր թատրոնն էլ հաւասարվի եւրոպականին և ապա հետաքրքրվենք։ Իսկ չը յաճախելով թատրոն արդեօք կարող ենք յուսալ, որ մի օր էլ մեր մայրենի բեմը կը հասնի եւրոպականին։ Երբէք։

Ներկայ թատերաշրջանի համար կազմակերպված թէ դերասանական խումբը և թէ ռեպերտուարը միանգամայն գոհացուցիչ են և մինչև իսկ պատիւ կը բերեն ամեն մի այլազգի համար։

Ուրեմն մնում է, որ հայ թատերասէր հասարակութիւնը սիրով և ստուար քանակով յաճախէ թատրոն, որպէսզի իր նիւթական և բարոյական աջակցութեամբ միջոց տայ զարգանալու և առաւել ևս ծաղկելու մայրենի բեմական արուեստին, որը հանդիսանում է հայ լեզուի կենդանի պահպանման գլխաւոր նեցուկներից մէկը։

Նազար

ԱՍԱՑԷՔ ԽՆԴՐԵՄ, ՈՒՐ ԳՆԱՆՔ

Տարէ-տարի աւելանում է մեր թեմականաւարտների թիւը, աւելանում է և հայ ուսուցիչների թիւը, ընկնում է դրա հետ և նրանց պատիւն ու յարգանքը, նուազում է նրանց նիւթական աղբիւրը, որից մի կերպ սնվում էին։

Իսկ այսպիսի պարագայում ինչ անի հայ ուսուցիչը, ու՞ր գնայ, ու՞մ դուռը ծեծի... մինչև ե՞րբ պատառոտած, ցնցոտի վերարկուով, գիշերով ծեծի այս կամ այն հոգաբարձուի դուռը, տեղ խնդրի, աղերսի չարճակել իրան, նրա կամայականութիւնները կատարի։

Վերջապէս մինչև ե՞րբ նա դառնայ մութ նկուղներում իդէալիստ-ուսուցիչ, գաղափարի ծառայող, քաղցած հայրենասէր, մինչև ե՞րբ։

Գիտեմ, կառարկէք, թէ «լոյս են տալիս խաւարներին, իսկ ջուր՝ ծարաւներին». այդ ճիշդ է. ես էլ եմ ընդունում. իսկ եթէ լապտերի, կանթեղի մէջ վառելանիւթ չը կայ, կամ թէ կանթեղը մաշվել, ծակվել է, այն ժամանակ ինչ կանէք. կարծեմ ոչի՛նչ։

Հէնց այդպիսի ճգնաժամի մէջ է և մեր հայ ուսուցչութիւնը. նա գնում է, գլորվում է դէպի ցած, մութը, անդունդը։ Նա իր ունեցածն էլ, ոչինչ չը ստանալով, կորցնում է, վարանում է ամեն տեղ։

Բայց ինչու, ինչն է պատճառը. հօ ծընված օրից նրա ճակատին չեն գրել, թէ դու ուսուցիչ պիտի լինես, թէ դու ազգին նահատակ պիտի լինես, կարծեմ ոչ, ազատ են ծնվել բոլորը, ազատ էլ պիտի ապրեն ու մեռնեն։

Թող ծառայեն ազգին, կրթեն նրա զաւակներին. ես այդ բանին դէմ չեմ. բայց ինչո՞վ, ինչ պաշարով, քանի որ աշակերտը համարեա միևնոյն մակերևոյթի վրա է կանգնած, ինչ որ ուսուցիչը։

6—7 տարի արտասահմանում սովորող ուսուցիչը հազիւ հազ աշակերտներին խաբելով անցկացնում է դասը, պատմութեան փոխարէն նրան զբաղեցնելով այլ և այլ ֆրանսիական կամ գերմանական անմիտ ցնդաբանութիւններով, և զուր տեղը ժամեր խլում աշակերտներից (օրինակներ շա՜տ)։ Այս եթէ անում է համալսարանի դուռը տեսնողը, ապա ինչ կանի մեր թեմականաւարտը. նա կը նմանի այն մարդուն, որը միանգամայն անծանօթ լինելով գիւղական գործին՝ ցանկանում է արտ վարել, մաճ բռնել։

Հետևանքը, ի հարկէ, շատ պարզ է. կամ խոփը պիտի կոտրի, կամ մաճը։

Հէնց այդպիսի «անծանօթներից» են մեր ուսուցիչները, որոնք դեռ մանկավարժութեան հոտը չառած՝ ուսուցչութեան ու դաստիարակութեան մասին գաղափար չը կազմած, յանկարծ աւարտած-չաւարտած վազում են գաւառները տրոստով, շլեապով, ուսուցիչ-խմբապետ լինելու։

Վայն եկել տարել է մեզ. երջանիկ է հայոց ազգը։

Լաւ, ուսուցիչ, ուսուցիչ, բայց որ տեղ չը կայ, ու՞ր գնան։ Ինչո՞ւ են ընկել մեր թեմական դպրոցների յարգելի վարիչները, ինչո՞ւ են դառնում շատերի կորստեան պատճառը։

Իսկ այն աշակերտը, որը չի ուզում ուսուցիչ լինել, այլ ուսման տենչով վառված ցանկանում է շարունակել, նրան ի՞նչ կասէ... նա ու՞ր գնայ։

Տուէք մեզ ճանապարհ, գոնէ նեղ, դէպի լոյս, գիտութիւն. թողէք մենք էլ շփվենք օտարների հետ և վայր թափենք մեր վայրենութեան շղթաները. թողէք մեզ էլ ճանաչեն ուրիշները։

Հարկաւոր չեն մեզ ձեր ոչ շլեապան, ոչ տրոստը և ոչ էլ ֆարաջան. տուէք մեզ մի այլ ճանապարհ։

Դո՛ւք, հոգևոր հայ սեմինարիաներ, ապահովեցէք ձեր աշակերտութեան գոյութիւնը, մի՛ թոյլ տաք, որ բարձրանան և բօլէի մէջ գլորվեն անդունդը...

Օտար դպրոցաւարտների առաջ բոլոր համալսարանները բաց են լայնօրէն, բոլորին ընդունում են, իսկ երբ հայ սեմինարիստ է գնում, դեռ դռանը չը հասած՝ կանչում են՝ «стой, воспрещается» ու մի հատ էլ գլխին խփում, վռնդում։

Ինչո՞ւ համար, ումի՞ց են պակաս, ո՞վ է մեղաւորը. կրկին դո՛ւք, հոգաբարձուներ, տեսուչներ. դո՛ւք, դո՛ւք։

Արտահանեցէք այնպիսի ապրանք, որ ծախվի օտար շուկայում, պատրաստեցէք այնպիսի զինւոր, որ կռւի պատերազմի դաշտում. հակառակ դէպքում, փակեցէք այդ հոգևոր «դպրոցների» դռները, ջնջեցէք նրանց այլասերուած անունը... և մի թունաւորէք հայ երիտասարդութեան ամբողջ կեանքը։

Ինչո՞ւ ես լռում և դու «Մշակ», հայ մամուլ, դու որ նեղեալների, տանջվածների պաշտպան ես կանգնած, դու որ հայ անդաստանում լոյս տարածող ես կոչված. ինչո՞ւ ես լռում, ինչո՞ւ չես հնչեցնում քո հուժկու կոչնակը, ինչո՞ւ չես պաշտպանում քո զաւակների իրաւունքները, ինչո՞ւ չես սրբում նրա արցունքները. եթէ դու էլ լռես, այն ժամանակ մնաք բարեա՜ւ և դո՛ւ հայ մամուլ, և դո՛ւ հայ հասարակութիւն, և դո՛ւք ոճրագործ «դպրոցավարիչներ»...

Արշալոյս Տէր Սիմէօնեան

ԿԱՐԱՊԵՏ ԵԱՂՈՒԲԵԱՆ

Այսօր հողին է յանձնվում Կարապետ Եաղուբեանի մարմինը։

Նա ծնվել էր Ախալքալաքում և սկզբնական կրթութիւնն ստացել Ախալցխայում, նախ հայոց ծխական Կարապետեան դպրոցում և ապա ռուսաց գաւառական դպրոցում։ Միջնակարգ կրթութիւնն ստացել էր Թիֆլիսի կլասիկական գիմնազիայում, իսկ բարձրագոյն կրթութիւնը Պետերբուրգի համալսարանում, իրաւաբանական ֆակուլտէտում։ Ուսումն աւարտելուց յետոյ նա մտաւ պետական ծառայութեան մէջ, առ ժամանակ մնաց Թիֆլիսում իբրև թեկնածու դատաւորական պաշտօնի, ապա նշանակվեց քննիչ Գեօկչայում և Բիւրղամիրում. այս պաշտօնը մի քանի տարի անմնայն բարեխղճութեամբ վարելով՝ լաւագոյն վկայութիւններով առաջարկվեց հաշտարար դատաւորի պաշտօնի համար (որքան յիշում եմ՝ Ղուբա քաղաքի համար), բայց Պետերբուրգում այս առաջարկութիւնը չը հաստատվեց։

Տեսնելով որ պետական պաշտօնում առաջ գնալու ասպարէզ չը կայ՝ Կ. Եաղուբեանը թողեց այդ ծառայութիւնը և սկսեց պարապել փաստաբանութեամբ, նախ Բագվում և վերջին չորս տարիներս Թիֆլիսում։

Դեռ Պետերբուրգում, ուսանողութեան շրջանում, հանգուցեալը սերտ կապ էր պահպանում հայ ուսանողութեան հետ. միշտ մասնակցում էր ուսանողութեան ժողովներին, սեկցիաների պարապմունքներին, (որոնց նպատակն էր հայերէն կարդալ և հայերէն գրքոյկներ հրատարակել), պահում էր հայ ուսանողական գրադարանը, մասնակցում էր ուսանողական երեկոյթներ կազմակերպող մասնաժողովներին և այլն։

Նոյն ջերմ մասնակցութիւնն ունեցաւ հանգուցեալը, Պետերբուրգից վերադառնալուց յետոյ, հայոց բոլոր հասարակական հարցերում՝ թէ Թիֆլիսում և թէ Բագվում բնակած ժամանակ. մասնակցում էր բարեգործական, հրատարակչական, եկեղեցական-ծխական ժողովներին, ընտրվում էր դպրոցական և բարեգործական հաստատութիւնների անդամ և առհասարակ աշխատում էր, որքան հնար ունէր, զարկ տալ ազգային-հասարակական կեանքի զարգացման։

Յիշատակելի անուն թողեց Կ. Եաղուբեանը նաև իբրև հրապարակախօս։ Թիֆլիսում առաջին անգամ հաստատվելիս՝ նա ամենամօտ և բեղմնաւոր աշխատակից էր Արգ. Յովհաննիսեանի «Արձագանքին» (նախ շաբաթաթերթին և ապա լրագրին)։ Մի քանի յօդվածներ զետեղեց «Մուրճում». վերջին տարիներս նա գրում էր «Մշակում», և նրա վերջին ընդարձակ յօդվածը, որ անցեալ տարի տպվեց այս լրագրի մի շարք համարներում և ապա առանձին գըրքոյկով հրատարակվեց՝ նվիրված է պաշտպանելու հանգուցեալ Մատթէոս Բ. կաթողիկոսի կարգադրութիւնը, որով ընդլայնվում էր ժողովրդի մասնակցութիւնը հայոց եկեղեցական-թեմական գործերի կառավարութեան մէջ։ Այս հարցի շուրջը նա բուռն բանակռիւ էր մղում «Հովիւ» շաբաթաթերթի դէմ։

Իբրև մնայուն աշխատութիւն յիշելու է հանգուցեալի հայերէն-ռուսերէն բառարանը, որին ձեռնարկել էր դեռ ուսանող եղած ժամանակ, հայ ուսանողական ժողովի առաջարկութեամբ (յանձն առնելով մշակել և ընդարձակել Կ. Խատիսեանի կազմած խիստ համառօտ բառգրքոյկը)։ Գիրքը տպագրվեց 1881 թվին և շուտով սպառվեց։ Հանգուցեալը տարիներից ի վեր հաւաքում էր նիւթեր՝ լրացնելու իր բառարանը, պատրաստելով նրա երկրորդ տպագրութիւնը։ Հերու ամբողջ տարին, իր ազատ ժամանակները գործ էր դնում՝ կարգի բերելով իր հարուստ նիւթերը և մշակելով նրանց։ Կէսից աւելին արդէն բոլորովին պատրաստած լինելով՝ նա այս տարվայ գարնանը սկսեց երկրորդ տպագրութիւնը (ինչպէս ժամանակին յայտարարվեց լրագիրներում) և 4 թերթ արդէն տպեց։ Սակայն հեղինակի անակնկալ հիվանդութիւնը (յունիսի վերջերին) ընդհատեց թէ տպագրութիւնը և թէ նիւթի մշակութիւնը, իսկ նրա ցաւալի մահը արդէն վերջ դրեց երկուսին էլ։

Կ. Եաղուբեանը վախճանվեց 51 տարեկան, դեռ լի եռանդով և աշխատելու ընդունակութեամբ։ Նրա հիվանդութիւնը, բժիշկների հետազօտութեամբ, ուղեղի մէջ առաջացած ուռոյց էր (նորակազմութիւն), որից առաջ էր գալիս երբեմնակի արիւնհոսութիւն գլխի մէջ. Այդ արիւնհոսութիւնն էլ անմիջական պատճառ դարձաւ նրա մահվան։

Հանգուցեալը յայտնի էր իր հանդարտ, հաւասարակշռված բնաւորութեամբ, կորեկտ ու արդար վերաբերմունքով դէպի իր գրական հակառակորդները։ Նրա վաղաժամ մահվամբ մեր հասարակական ու հրապարակախօսական ասպարէզից չքանում է մի շատ օգտակար և համակրելի գործիչ։

Ստ. Մալխասեանց

ԿԱԹ. ՊԱՏՈՒԻՐԱԿՆԵՐԻ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բագու, 26 սեպտեմբերի

Երէկ, ամսիս 25-ին, կիրակնօրեայ պատարագից յետոյ, տեղական լրագրի յայտարարութեամբ Բալախանի, Բիբի-Էյբաթի և քաղաքի հայ ծխական համայնքը հրաւիրված էր կաթողիկոսական 8 պատգամաւորների ընտրութեան, որ պիտի կայանար Մարդասիրական Ընկ. շէնութեան դահլիճում։

Բագու քաղաքի 4,000-ից աւելի ծուխ ունեցող հայ համայնքը, սովորական դարձած ցաւալի պայմանների շնորհիւ, մինչև ժամը 1-ը հազիւ թէ 150 ներկայացուցիչ ունեցաւ այդ կարևոր ժողովում։

Ժողովի նախագահի (Ան. Քալանթար) և քարտուղարի (Բահաթրեան) ընտրութիւնից յետոյ, գործակալ հայր Եղիշէ Գեղամեան, շրջաբերականների և թեմական առաջնորդի կարգադրութեան համաձայն առաջարկում է ձեռնարկել 8 պատուիրակների ընտրութեան։

Իսկ Հ. Տէր-Միքայէլեանի այն հարցին, թէ ի՞նչ օրինական հիմունքներով է առաջնորդված 8 հոգու ընտրութիւնը՝ հայր-գործակալը տալիս է բացատրութիւն, որ օրէնքով իւրաքանչիւր եկեղեցի պարտաւոր է ընտրել ոչ աւելի քան երկու պատուիրակ. քանի որ այսօր քաղաքի արուարձան՝ «Հայոց գիւղի» եկեղեցու ծխականների կողմից պիտի ընտրվեն երկու պատուիրակ, մնում է, որ Բալախանի աղոթատան և քաղաքի երեք եկեղեցու կողմից ընտրվեն 8 հոգի, որ այդ տասից ընտրված երկու պատուիրակները թեմի միւս ընտրեալների հետ Շամախում ձեռնարկեն թեմի աշխարհական մի պատգամաւորի ընտրութեան։

Ուսուցիչ Ս. Վարդանեան նկատում է, որ նորակառոյց եկեղեցին քանի չէ աւարտված և նրա ծուխը չէ որոշված՝ նրա չորս պատերը եկեղեցի համարել և երկու ձայն յատկացնել՝ դեռ վաղ է։ Այս հարցի իրաւական տեսակէտից առաջ է գալիս և հետևեալը. արդեօք ներկայ ծխականների ժողովը, առանց 8 պատուիրակների, ուղղակի իր կողմից ձեռնհաս չէր լինի ընտրելու Շամախի հրաւիրվող երկու պատուիրակներին։ Այս հարցերի շուրջ ժողովը, մօտ մի ժամ զբաղվելով, որոշում է համաձայն առաջնորդի կարգադրութեան ընտրել 8 հոգի, մանաւանդ որ «Հայոց գիւղը» արդէն այդ ժամանակ կարող էր ընտրած լինել իր երկու պատուիրակներին, և որոշումը չէր հասնի իր նպատակին։

Նախագահը, հարցը սպառված գտնելով, առաջարկում է անցնել 8-ի ընտրութեան։ Եւ նախապէս հարց է տալիս, թէ ի՞նչ ձևի ընտրութիւնը աւելի յարմար են գտնում ծխականները։

Ուսուց. Ղազարեան և Ց. Խօջամիր յայտնում են, որ նախ քան ընտրութեան դիմելը և ձևի մասին խօսելը՝ հարկաւոր է պարզել ընտրելի պատուիրակների հայեացքը՝ այս և այն կաթողիկոսական թեկնածուների մասին։ «Մինչև մեզ համար յայտնի և պարզ չը լինի, թէ նրանք ի՞նչ ուղղութեան և ո՞ւմ կողմնակիցներ են, մենք նրանց, ինչ կը լինի՝ լինի, «կուրօրէն ընտրել չենք կարող»—ասում է վերջինը։

Կոստ. Խատիսեան.—Ես այդ համարում եմ բաւական դժուար. դա կարող է ընտրութեան գործը շատ երկարեցնել. ամեն մէկը եթէ հէնց 10 րոպէ խօսի, այդ ու՞ր կը հասնի. 10 ժամում մենք չենք վերջացնի. ուստի յարմարը այն է, որ ընտրէ ինքը 8 հոգուն, պարտաւորեցնելով նրանց մի այլ ժողովում պարզելու իրանց հայեացքը, մանաւանդ որ այժմ մենք բոլորովին անպատրաստ ենք. նոյնիսկ ինքս, ձեռքս սրտիս կարող եմ երդվել, որ մինչև այժմ դեռ ինձ համար պարզ չէ, թէ ո՞ւմ պէտք է ձայն տալ։

Նր. Թաղիանոսեան.—Ասում են՝ մեզ համար դեռ պարզ չէ, թէ ո՞վ է արժանաւոր թեկնածուն և ո՞ւմ պէտք է ձայն տալ. հէնց այդ պատճառով էլ մեզ հարկաւոր է բացատրվել, մտքերի փոխանակութիւն ունենալ և պարզել այդ և նման մութ կէտերը։ Միանգամայն այդ իրագործելի կը լինէր, եթէ այս և այն թեկնածութեան և ուղղութեան կողմից թոյլ տրվէր հանդէս գալու և խօսելու երկու-երկու հոգու և այն էլ նախապէս որոշված ժամանակում, օրինակ 10—15 րոպէում, ինչպէս այդ անում են դումայում։

Միք. Պապաջանեան.—Ինձ անհասկանալի է ծխականների կողմից այդ անվստահութիւնը դէպի իրանց ընտրելիները, մանաւանդ որ նրանք, այդ ընտրելիները, անծանօթ մարդիկ չեն, ուստի ցանկալի էր, որ խնդիրը չերկարէր, հաւատային, որ իրանց ընտրեալները ի չարը չեն գործ դնի ընտրողների հաւատը։ Ինչ խօսք, լաւ կը լինէր, ի հարկէ, որ կաթողիկոսական թեկնածուների մասին պարզվէր ընտրելիների բռնելիք ուղղութիւնը, սակայն՝ այդ գործնական բաւական դժուարութիւններ ունի ժամանակի և ծխականների ժողովելու կողմից։ Եւ հեշտ էլ չէ այսօր մի ժողովում թեկնածութեան հարցի մասին որոշում կայացնելը. անցեալում այդ կարելի էր, որովհետև կար որոշ մի ուղղութիւն, իսկ այժմ խնդիրը այլ կերպարանք ունի։ Մանաւանդ մենք ներկայ պատահաբար ժողոված մի խումբ ծխականներս՝ իրաւունք էլ չունենք կաթողիկոսական թեկնածուների մասին մեր որոշումները հազարաւոր ծխականների որոշումն համարելու։

Ձայն.—Հետևապէս և ձեզ ընտրելու իրաւունք էլ չունենք։

Խօջամիրեան ձայն է խնդրում, նախագահը յայտնում է, որ ոչ ոքի նոր ձայն տալ չէ կարող։

Գ. Օհանջանեան.—Մեր խօսքերը և գործը իրար չեն համապատասխանում. մենք ասում ենք կաթողիկոսական ընտրութեան խնդիրը ամենակարևոր և լուրջ խնդիր է, իսկ այդ կարևոր ու լուրջ խնդրի համար շուտ-շուտ ժամացոյցին ենք նայում, որ չը յետաձգենք մեր ստամոքսի խնդիրը։ Գոյութիւն ունեցող երկու ուղղութիւնների մասին խօսելը երկար ժամանակ էլ չէր պահանջի, բայց երևում է, որ ստամոքսային խնդիրը աւելի թանգ գնահատութիւն ունի։ Կաթողիկոսական թեկնածուների, կամ տիրող երկու հոսանքների մասին խօսելը անպայման մեծ կարևորութիւն է ստանում հէնց այն պատճառով, որ ընտրողական նախապատրաստական ժողովներ տեղի չեն ունեցել մեզնում։ Մի խումբ մարդիկ մեզնում կարծես ամենայն ինչ «փողրաթով» լինեն վերցրած. նրանք այլ ևս ոչ մի բանում չեն ուզում հաշտվել, տեսնել ու լսել, որ իրանցից զատ այլ կերպ մտածող և դատողներ էլ կան։

Կ. Խատիսեանի «փողրաթի» կոմպրոմիսիան գալիս հաստատում են, որ այս անգամ էլ մենք մեր նպատակին չենք հասնելու, նոր և թարմ ոյժեր չենք տեսնելու։ Այստեղ անվստահութեան մասին էլ խօսք եղաւ, բայց ինչ հաւատաք, որ մեզ առաջարկվող ընտրութիւնը, մերը թողնենք, գէթ ամբողջ հայ համայնքի տրամադրութեան արտայայտողը կը լինի...

Ա. Վաչեան և Հ. Տէր-Միքայէլեան պահանջում են հարցին վերջ տալ, «ապա թէ ոչ երկու երեք օրումն էլ ընտրութիւն չի կայանայ այդ հակաճառութիւններից... Ինչ կարծիք, որ յետոյ ընտրվածները հաշիւ կը տան, կը բացատրեն հասարակութեան»...

Ց. Խօջամիր.—Անցեալ ընտրութեանն էլ ասացիք, բայց չը կատարեցիք ձեր խոստումը... և էլի չէք կատարելու։

Ընդհանուր ժխոր։

Նախագահ.—Հարցը սպառված կարելի է համարել, ուստի ով ցանկանում է առաջ ընտրութիւն չը լինի՝ թող ձեռք բարձրացնի...

Բժ. Սաղեան.—Պ. Նախագահ, այդպէս հարց դնել և վճռել չէ կարելի. հարցը ոչ թէ չէ սպառված, այլ և ինչպէս հարկն է՝ չի էլ զարգացած. թոյլ տուէք այս և այն թեկնածութեան կողմից ութը-տասը հոգի բացատրելու մեզ...

Նախագահ.—Պարոններ, հայր գործակալի բացատրութեամբ, պարտաւոր եմ յայտնել ձեզ, որ այսօրվայ յայտարարութեան մէջ ծխականները հրաւիրված են լոկ ընտրութեան և ոչ թէ թեկնածուների հարցի մասին խօսելու. ուստի ով ցանկանում չէ ուղղակի ընտրութեան դիմելու, թող ձեռք բարձրացնի։

Եւ ընդդէմ 39-ի 64 ձայնով դիմեցին ընտրութեան։

Ահա, թէ ինչպիսի օրինակելի ընտրութիւն կայացաւ մեզնում։ Մնացեալը հետևեալ նամակովս։

Ց. Խ.

Յ. Գ.—Ընտրված պատուիրակները հետևեալներն են. Կ. Խատիսեան (82 սպիտակ, 29 սև), երդ.-հաւ. Բաբաջանեան՝ (80—33), ինժ. Ա. Վաչեան (73—38), բժ. Թ. Զաքարեան (76—37), Ս. Թաղիանոսեան (71—42) Ան. Քալանթար (70—41), բժ. Տէրտէրեան (66—46) և Տ. Բէգզադեան (66—47)։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Երէկվայ տօնի պատճառով, այսօր ռուս պարբերական հրատարակութիւնները Թիֆլիսում լոյս չը տեսան։

◆ Այսօր Զուբալովեան ժողովրդական տանը Պալմօվը կը դասախօսէ ռուսաց գրականութեան պատմութեան մասին։

◆ Թիֆլիսում երիտասարդ զինւորացուներին ծառայութեան կոչելու գործողութիւնները կը սկսվեն հոկտեմբերի 15-ից։ Առաջին օրը կը ստուգվեն ցուցակները, հոկտեմբերի 16-ին կը սկսվի վիճակահանութիւնը։ Հոկտեմբերի 17-ից նորակոչները կենթարկվեն բժշկական քննութեան։

◆ Այսօր, ցերեկվայ ժամը ուղիղ 1-ին, «Մշակի» խմբագրատան մէջ նշանակված է ժող. համալսարանի հայկական սեկցիայի անդամների ժողովը։

◆ Ինչպէս գրվեց, այս օրերս Թիֆլիսի նահանգական դատարանի նախագահը յանձնեց «Դաշնակցութիւն» յեղափոխական կուսակցութեան գործի առթիվ Թիֆլիսի Մետէխի բանտում բանտարկվածներին մեղադրական ակտի պատճէնը։ Այժմ, ինչպէս տեղեկացնում են տեղական թերթերը, իբրև պաշտպաններ յիշեալ գործի մէջ մեղադրվողների համար եկել են մայրաքաղաքների յայտնի փաստաբաններից Սօկօլօվը, Զարուդնին, Կերէնսկին և Ումանսկին։ Մեղադրեալներին տրված է մի շաբաթ ժամանակ՝ գրելու իրանց ցուցմունքները։ Գործը կը քննվի Պետերբուրգում սենատի առանձին ատեանի մասնակցութեամբ հաւանօրէն այս տարվայ դեկտեմբեր ամսին։

◆ Սօչի մեկնեց Կովկասի գիւղատնտեսութեան տեսուչ Վասիլևը՝ նախագահելու համար Սև-ծովի ափում գիւղատնտեսութիւնը զարգացնելու մասին գումարված խորհրդակցութեան մէջ։ Միևնոյն խորհրդակցութեանը մասնակցելու են նաև մի քանի մասնագէտներ՝ Ալ. Քալանթար, Բօլլով, Տիմօֆէեվ և այլն։

◆ «Т. Л.» լրագրի ասելով հոկտ. 7-ին դատարանը հաստատելու է հանգուցեալ Ալ. Մանթաշեանի կտակի գործը։ Բոլոր կտակակատարները (Եւանգուլեան, Խարազեան, Ղորղանեան և Աւթանդիլեանց) հրաժարվել են կտակակատարի կոչումից և կտակը գործադրելու են հանգուցեալ Ալէքսանդր Մանթաշեանի զաւակները։

◆ Հոկտեմբերի 9-ին Զուբալովեան ժողովրդական Տանը նշանակված է Թոքախտի դէմ Մաքառող Կովկասեան Ընկերութեան անդամների տարեկան ընդհանուր ժողովը։

◆ Այսօր, Կ. Հ. Բ. Ընկ. շինութեան Ղարաջեան դահլիճում տեղի կունենայ Հայ Դրամատիկ. Ընկ. անդամների ընդհանուր ժողովը, որը երկրորդ անգամ նշանակված լինելով՝ կը կայանայ որքան էլ որ անդամ ներկայ լինի։

◆ Վաղը Արտիստական թատրոնում բացվելու է Թիֆլիսի հայ դերասանների միութեան ներկայացումների սէզօնը Զուդերմանի «Հայրենական տուն» դրամայով։

◆ Այսօր թաղում են հանգուցեալ երդ.-հաւատարմատար Կարապետ Եաղուբեանին։

◆ Ոչ-պաշտօնական լուր է ստացվել, թէ իբր Վեդէնի շրջանի Մեխէթի գիւղի մօտերը սպանվել է յայտնի աւազակապետ Զելիմ-խանը իր քրոջ քարաժայռի մէջ։

◆ Ներսիսեան դպրոցի հոգաբ. ցանկանալով կազմել դպրոցի հոգաբարձուների մի ալբոմ, որտեղ զետեղելու է հոգաբարձուների լուսանկարները, սրանով խնդրում է նախկին հոգաբարձուներից և հանգուցեալ հոգաբարձուների ժառանգներից, որ ուղարկեն դպրոցի վարչութեանը թէ կենսագրական տեղեկութիւնները և թէ լուսանկարները կամ որպէս նուէր և կամ ընդօրինակելու համար։

◆ Կովկասի Փոխարքան իրաւունք է տուել Կ. Հ. Բ. Ընկերութեանը հոկտ. 1-ից մինչև դեկտ. 31-ը Կովկասի փոխարքայութեան սահմաններում գտնված հայերի մէջ կատարել ժողովարարութիւն անել յօգուտ դպրոցական-ուսուցչական ֆոնդի, որը հիմնվում է Ընկ. 30-ամեայ գոյութեան յոբելեանի առիթով և որից օգտվելու են ծերութեան, հիւանդութեան և այլ համանման պատահարների պատճառով աշխատանքից զրկված գիւղական խեղճ ուսուցիչները և նիւթական աջակցութեան կարօտ գիւղական աղքատ դպրոցները։

◆ Կ. Հ. Բ. Ընկ. խորհուրդը Ընկերութեան 30-ամեայ յոբելեանը տօնելու է դեկտեմբերի 18-ին։

◆ Կովկասի Փոխարքան թոյլ է տուել խաղալ յունարէն «Էամէ» ողբերգութիւնը։

◆ Մեզ յայտնում են, որ հայերէնի է թարգմանված Բլէմի յայտնի պիէսը, որի անունն է «Կնոջ իրաւունքը»։

◆ Անցեալ օրը կայացաւ քաղաքային վարչութեան և համալսարանական մասնաժողովի միացեալ նիստը։ Ուշադրութեան առնելով այն հանգամանքը, որ միջվարչական յանձնաժողովը Պետերբուրգում՝ մեր երկրում համալսարան բանալու խնդիրը յանձնեց մինիստրների խորհրդի քննութեանը, միացեալ խորհրդակցութիւնը որոշեց շարունակել դրամ հանգանակելու և խոստացված գումարները ստանալու գործը, նաև նիւթեր ժողովել ու ուղարկել Պետերբուրգ, որպէսզի Կովկասում համալսարան բանալու հարցը, յիշեալ անհրաժեշտ նիւթերի հետ միասին, խորհրդակցութեան նիւթ ծառայէ Պետական Դումայում։ Միևնոյն նիստում խնդրվեց համալ. մասնաժողովի անդամ Թսխվիթաշվիլին աշխատել համոզելու Բագուի նաւթարդիւնաբերողներին՝ նպաստ տալ ապագայ բարձր կրթական հաստատութեան համար։

◆ Վրաց Գիւղատնտեսական Ընկերութիւնը իր հաշւով երկու ագրոնոմներ է ուղարկել Կախեթիա և Քարթալինիա։

◆ Ռուսաց սինօդը թոյլատրել է սանատօրիա հիմնել կովկասեան հանքային ջրերում ուղղափառ հոգևորականութեան աղքատ անձերի համար։

◆ Քութայիսից «Р. Сл.»-ին հեռագրում են, որ գնդապետ Ջխեիձէի և առևտրի մինիստրութեան պաշտօնեայ Աֆէնդիկի և երկու տիկինների վրա աւազակներ են յարձակվել։ Ցափշտակելով շորերը և 1000 րուբլի, աւազակները Աֆէնդիկին գերի են տարել և պահանջում են 5,000 ր. փրկանք՝ ազատ թողնելու համար։

ՏԵՂԵԿ. ՎՐԱՑ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

◆ Վերջերս տեղական «Սախալխո Գազէթի» օրաթերթը սկսել է թարգմանաբար ծանօթացնել հայ մամուլի կարծիքների հետ, առաւելապէս քաղ. ընտրութիւնների և կովկասեան բնոյթ կրող հարցերի նկատմամբ արտայայտված։

◆ Առաջիկայ քաղ. ընտրութիւնների առիթով խոշոր բանակռիւ է սկսվել վրաց մամուլի այլեայլ օրգանների մէջ։ Ազգայնական պօզիցիան պաշտպանում է «Սախալխո Գազէթին», մինչդեռ Քութայիսում հրատարակվող ազատական «Մնաթօբի» և Թիֆլիսում լոյս տեսնող «Թեմի» շաբաթաթերթը յիշեալ ընտրութիւնների նկատմամբ պաշտպանում են ինտէրնացիօնալ սկզբունքները և դէմ են գրում առանձին ազգային կուրիաների բաժանման։ Վերջիններս սուր լեզուով պատախանում են ընտրութիւնների ժամանակ վրացիների առանձնանալու նկրտումը, այդպիսի երևոյթը համարելով ծայր աստիճան վնասակար մանաւանդ ընչազուրկ դասակարգի շահերի համար։

◆ Վրաց Թատրոնի ֆօյէյում ցուցադրված է աէրօպլանի մի նոր կաղապար, որը հնարել է Կվիթաշվիլին։ Այս կաղապարը իսկականի $^{1}/_{5}$ մասն է կազմում։

◆ Քութայիսի մասնաւոր գիմնազիաներից մէկի ֆրանսերէն լեզուի ուսուցիչ է կարգված վրաց անուանի հրապարակախօս Լ. Դարչիաշվիլին, որը 1904 թ. մեծ աջողութեամբ աւարտեց Բրիւսէլի համալսարանը, ստանալով իրաւաբանական դօկտորի կոչում. Լ. Դարչիաշվիլին վրաց իրականութեան մէջ եզակի դէմքերից մէկն է իր լուրջ և բազմակողմանի մտաւոր պատրաստականութեամբ։ Նա վերջին երկու տարիները ապրում էր Գերմանիայում, լսելով յայտնի պրօֆէսօրների դասախօսութիւնները։

◆ Վրաստանի հին մայրաքաղաք Մցխեթի հինաւուրց տաճարի տօնի օրը, հոկտեմբերի 1-ին, վրաց թերթերի խմբագրութիւնների մէջ աշխատանք չը կար, որով և այսօր վրաց թերթերը լոյս չը տեսան։

◆ Վրաց Դրամատիկ. Ընկ. խումբը սէզօնը կը սկսի հոկտեմբերի 5-ին, Վրաց Թատրոնում։ Արդէն կազմված է առաջին ամսի ռեպերտուարը։ Հոկտեմբերի 5 ին, սովորութեան համաձայն, սէզօնը կը բացվի Էրիսթավիի «Սամշօբլօ» (Հայրենիք) պիէսով։ Ներկայ սէզօնում կը խաղացվեն նաև մի շարք նոր ինքնուրոյն և դեռ չը խաղացված թարգմանական պիէսներ։ Շաբաթվայ ընթացքում կը կազմակերպվի 2 ներկայացում, մէկը սովորական, միւսը պակասեցված գներով։

◆ «Սախալխո Գազէթի» օրաթերթը իր № 414-ում մի ընդարձակ յօդուած է նուիրել Ասրպետի «Բէհա» ռուսերէն աշխատասիրութեան, միաժամանակ իր յաւելուածում տպագրելով Բաբէի, Բէհայի յայտնի հետևողներ Սուլէյման-խանի և Թահիրէի նկարները։ Յօդուածագիրը ծայրէ ի ծայր կարդալով յիշեալ գիրքը, գտնում է, որ նրանում զետեղված նիւթերը չափազանց հետաքրքրական են և բովանդակալից, սակայն նրանում չը կայ որոշ աստիճանականութիւն, սիստեմատիզացիա։

ՕՐՎԱՅ ՆՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

◆ Ֆրանս-գերմանական յարաբերութիւնները վերջնականապէս յանգեցին համաձայնութեան։

◆ Պարսից կառավարութիւնը ներկայումս խաղաղ բանակցութիւններ է վարում Մահմէդ-Ալիի համար կռւող Սամադ-խանի հետ՝ հաշտութիւն կապելու նպատակով։ Սամադ-խանը մի քանի գործով ցոյց տուեց, որ ուզում է վերջ դնել իր աւանտիւրային և հաշտութեան ձեռք մեկնել կառավարութեանը։

◆ «Journal»-ի աշխատակցի հետ խօսելիս Թիւրքական նախկին մինիստր և Կ. Պօլսի պատգամաւոր Հալաճեան էֆէնդին յայտնեց, թէ Տրիպօլիսի հարցը կապիտալ կարևորութիւն ունի ամբողջ Եւրոպայի համար։ Տրիպօլիտանիայի կորուստը կարող է ցաւալի ազդեցութիւն ունենալ Թիւրքիայի սահմանադրական ռէժիմի վրա և առաջ բերել ռէակցիայի բռնկումն, որ իր հետևանքում կունենայ քաղաքական անիշխանութիւն և ցեղերի ու կրօնների միջադէպ հանուր պետութեան մէջ։

◆ Թիւրքիան սոսկալի կերպով զայրացած է իր «հինաւուրց բարեկամ» Գերմանիայի երկդիմի գործելակերպից։ Երկիւղ կայ, որ Թիւրքիան ընդմիշտ երես դարձնէ աւստրօ-գերմանական բարեկամութիւնից և թեքվի Անգլիայի կողմը։

◆ Տրիպօլիսի ռմբակոծութեան ժամանակ գնդակներից մինը թռել է նահանգապետի բնակարանը, որից և նահանգապետը սպանվել է։

◆ Եմէնի արաբ ապստամբների պարագլուխ Իմամ Եահիան հեռագրեց Բ. Դրան, որ նա մտադիր է դադարեցնել թշնամական գործողութիւնները ի նկատի ունենալով օտարերկրացիների յարձակումը օսմանեան պետութեան վրա։

◆ Բօսնիայում և Հերցէգովինայում ներկայումս զօրքերի ուժեղ տեղափոխութիւններ են կատարվում։ Հաստատ կերպով խօսում են թէ այսօր կամ վաղը Նօվօ-Բազարի սանջակը կը գրաւվի։

◆ Պորտուգալական միապետականները վերջնականապէս պարտութիւն կրեցին։

◆ Յունական սահմանը լի է կազմ ու պատրաստ զօրքերով. գնում են նորերը. սահմանակից ազգաբնակութիւնը ահ ու երկիւղի մէջ է։ Ամէն րօպէ սպասվում է պատերազմի բռնկում։

◆ Օդեսայի գեներալ-նահանգապետ Տօլմաչեվի յաջորդ համարվում է Արխանգէլի նահանգապետ Ի. Սօսնովսկին։

◆ Կրասնօվօդսկում հրդեհը ահագին վնաս պատճառեց Վիշաուին, Հաջինսկիին և Կասպեական ընկերութեանը։

◆ Անջէլօ Պիլեաշվիլին իրաւունք է ստացել երկաթուղի անցկացնել Սիմֆէրօպօլից Ղարասուբազար։

◆ Եկատէրինօդարում մեռաւ 123 տարեկան Բիատրէեակօվան, որ շատ լաւ յիշում էր Նապօլէոնի արշաւանքը Ռուսաստան։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾ.

30 սեպտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Բացվեց այգեգործական, բոնջարանոցային և մեղուաբուծութեան ցուցահանդէս։

1912 թ-ի պետական եկամուտի նախագծի ընդհանուր ամփոփումը։ Սովորական եկամուտներ ընդամենը 2,855,169,551 րուբլի. արտակարգ պահեստի գումարներ կան ընդամենը 5.400,000 րուբլի։

Սովորական ծախքերը կազմում են ընդամենը 2,685,950,215 րուբլի։ Արտակարգ ծախքեր՝ 289,301,885 րուբլի։

Թոյլատրված է արձան կանգնեցնել Վորոնէժում բանաստեղծ Նիկիտինին։

Ժող. կրթութեան մասնաժողովը, ի յիշատակ Գօնչարօվի ծննդեան, որոշեց բանալ քաղաքային ձրի ընթերցարան ու քաղաքային դպրոցական տուն Գօնչարօվի անունով։

ՏՕՄՍԿ։ Կանանց բարձր դասընթացքների վերատեսուչ ընտրվեց տեխնօլօգիական ինստիտուտի պրօֆէսօր Մալեևը։

ՄՕՍԿՎԱ։ Սօցիալ-դեմօկրատական աշակերտական միութեան գործի առիթով մինը դատապարտվեց 8 ամսով բանտարկութեան։ Երկուսը փախել են արտասահման։

Եկան մի խումբ եապօնացի օֆիցերներ Նօգիի և Եամագատայի գլխաւորութեամբ։

ՎԵԱՏԿԱ։ Սարապուլում միլիօնատէր Սմագինը նուիրեց մի երեքյարկանի շինութիւն և 50,000 ր. երեխաների ապաստարան հաստատելու համար։

ԹԷՕԴՕՍԻԱ։ Սկսել են գալ արտասահմանեան շոգենաւեր։

ԼԱՅՊՑԻԳ։ Վարժուհի Տիրիօնը լրտեսութեան համար դատապարտվեց 6 ամսով բանտարկութեան։

Խմբագիր՝ ԱԼԵՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԲԺՇԿԱՊԵՏ
Գ. Ա. ՀԱԽՎԵՐԴԵԱՆ
Մասնագէտ միզասեռական, սիֆիլիս եւ վեներական հիւանդութիւնների։
Ընդունում է հիւանդներին՝
Առաւօտեան ժամը 12—1-ը, երեկ. ժամը 6—8-ը։
Կիրակի օրերը՝ միայն ժամը 12—1-ը։
Կուկիա, Սեմէօնօվսկայա փողոց, № 16.
Տելեֆօն № 40.
(Ե.ու.կ.) 220. 100—81

ԲԺՇԿԱՊԵՏ
Տ. ԳԷՈՐԳԲԷԳԵԱՆ
Աչքի հիւանդութիւններ
Առաւօտեան ժամը 10—1.
Երեկոյեան ժամը 5—7.
Վելեամինօվսկայա փողոց, № 8.
(Կ. Չ.) 416. 100—41

ԲԺԻՇԿ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆ
Մասնագէտ սիֆիլիս (606), միզասեռական, վեներական և կաշուի հիւանդութիւնների։ Էլեկտրաբուժութիւն։
Ընդունե- ($12\frac{1}{2}$—2 ժ. ցերեկվայ։
լութիւնը (5—7 ժ. երեկոյեան։
ամեն օր (Կանանց համար՝ 2—3 ժ. ցեր.
ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐԸ առ. ժ. 9—10-ը։
Սօլօլակ, Բէբուտօվսկայա, № 33 (անկիւն Պասկևիչի փողոցի)։ Տելեֆօն № 1175.
(Կ. Ե. Հ.) 888. 100—10

ԲԺԻՇԿ
Ե. Ի. ՄԻՆԱՍԵԱՆՑ
Ներքին, երեխայոց և ստամոքսա-աղիքային հիւանդութիւններ։
Պրօֆ. Mathien-ի մասնագիտական կլինիկայից—Պարիզում։
Ընդունելութիւնը (առաւ. ժ. 9—11.
(երեկ. ժ. 5—7.
Ելիզավետինսկայա փող. № 39. տել. № 1067.
(Ա. Օ.) 669. 100—34

ԱՏԱՄՆԱԲՈՅԺ
Մ. ՏԷՐ-ՄԻՆԱՍԵԱՆ
վերանորոգել է հիւանդն. ընդունել. ատամների և բերանի խոռոչի վիրաբեր.։ Տեխնիկ. աշխատանքների համար հրաւիրված է արտասահմանից ատամնաբոյժտեխնիկ։ Ընդունելութիւնը՝ առաւ. ժամը 10—2, երեկ. ժամը 4—6, կիրակի օրերը ժամը 10—12-ը։
Միխայլօվսկի պր. № 43.
(Օ.Մ.) 956. 10—2

ԲԺԻՇԿ
Գ. Ն. ՄԱՂԱՔԵԱՆ
ՆԵՐՔԻՆ ԵՒ ԵՐԵԽԱՅՈՑ
ՀԻՒԱՆԴՈՒԹԻՒՆՆԵՐ
Առանձնապէս ՍՏԱՄՈՔՍԻ և ԱՂԻՔՆԵՐԻ
Ընդունելութիւնը) 10—11 ժ. առ. (երեխաների)
ամեն օր) 5—7 ժ. երեկ. (ընդհանուր)
Միքայէլեան փող., № 36. տէլէֆօն 388.
(Չ.ու.կ.) 761. 100—23

ԲԺՇԿՆ. ՖԷԼԴՇԷՐ
Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆ
Սրսկումն, լուացումն, մասսաժ, էլեկտրականութիւն, մարմնամարզութիւն։ Հիմնաւոր բժշկութիւն սուր և խրօնիքական տրիպէրի, սեռական թուլութեան, անկարողութեան և սերմնահոսութեան—ցոյց է տալիս հմուտ մասնագէտ բժիշկների։ Օտարերկրեայ հիւանդներին տալիս է խորհուրդներ և բժիշկների հասցէներ։ Կարելի է ստանալ իմ կազմած «Գաղտնի հիւանդութիւնների բժշկարանը», գինը 50 կոպ., ճանապարհածախս՝ 15 կ.։ Հասցէս. Тифлисъ, Семеновская ул., № 9. Ընդունելութիւնը 3—5 ժամը երեկոյեան։
(Ե.Հ.Կ.) 892. 50—9

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԿԱՐՈՒՁԵՒԻ ԴՊՐՈՑ
ՕՐ. Մ. ԲԵՐԵԱՆԻ
Միխայէլեան փող., № 122.
Աւարտել է Մոսկվայի կարուձևի դասընթացքները և ընդունում է աշակերտուհիներ, որոնք սովորելու են կար, ձև և մոդեաժ։ Նաև ընդունվում են պատուէրներ մասնակցութեամբ օր. Ն. Քալօյեանի՝ մատչելի գներով։ Վարժուհիներին մեծ զեղչ։ Պատուէրները կատարվում են ճաշակով և շուտով։
Վաճառվում են выкройка-ներ։
(Հ.Կ.Ե.) 945. 4—2

ՀՐԱՒԷՐ
Ճամբարեցոց ս. Աստուածածին եկեղեցու բոլոր չափահաս ծխականները՝ կիրակի, հոկտեմբերի 2-ին, առաւօտեան ժամը 11-ին, հրաւիրվում են յիշեալ եկեղեցի առաջին ընդհանուր ժողովի, ընտրելու նոր քահանայ՝ հանգուցեալ Շմաւոն քահ. Տէր-Բարսեղեանի տեղ., որի համար յայտնելով խնդրում եմ աշխատել մասնակցելու ժողովին։
Գործակալ՝ Ղևոնդ քահ. Մամիկոնեանց
960. 2—2

ՀԱՅ ՕՐԻՈՐԴ
Կայսերական երաժշտ. դպրոցն աւարտած ՏԱԼԻՍ է
ԴԱՍԵՐ դաշնամուրի վրա.
Կարելի է տեսնել ժամը 3—5-ը, Ртищевская, 10, лѣвый верхній звонокъ.
(Կ. Հ.) 965. 5—1

Փորձված վարժուհի
սօլիդ յանձնարարականով, հմուտ լինելով հայերէն, ֆրանսերէն և գերմաներէն լեզուներին (տեսական և գործնական), նոյնպէս և երաժշտութեան, նաև ռուսաց տարրական լեզուին, կամենում է դասեր ունենալ օտար քաղաքներում։
967. 1—1

ՁՈՒԼՀԱԿԱՆՈՑ
(ուսումնարան-արհեստանոց)
Բ. Հ. ԿՈՒԼՏՈՒՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ
ՀՈՂԱՅԻՆ ՍԵԿՑԻԱՅԻ
Աշակերտ-աշակերտուհիների ընդունելութիւնը սեպտ. 20-ից։ Ձուլհականոցի դասընթացքն աւարտողները կուղարկվեն Երևանեան նահանգի գիւղերը որպէս վարպետ նոր բացվելիք ձուլհականոցներում, որոշ ռոճիկով։ Դիմել Բ. Հ. Կուլտ. Միութեան գրասենեակը՝ Բագու, Մալայա-Մօրսկայա փողոց, տուն Ռսկանովի։
(Օ. Մ.) 946. 4—3

ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ԵՆ
ՄԻ ՀԱՅ ԻՆՏԵԼԻԳԵՆՏ ԸՆՏԱՆԻՔՈՒՄ
գիշերօթիկ աշակերտներ և աշակերտուհիներ դասերի կրկնողութեամբ։ (Մօտ է Յովնանեան դպրոցին և տղայոց ու օրիորդաց երրորդ գիմնազիաներին)։
Տեղեկանալ «Մշակի» գրասենեակում։
(Կ. Հ.) 934. 3—3

ОСТЕРЕГАТЬСЯ ПОДДѢЛОКЪ!
ПРОВИЗОРА
Г. Ф. ЮРГЕНСЪ
БОРНО-ТИМОЛОВОЕ МЫЛО
ОТЪ ПОТА, ЗАГАРА, ВЕСНУШЕКЪ, УГРЕЙ, ПРЫЩЕЙ И ЖЕЛТЫХЪ ПЯТЕНЪ.
БЛАГОВОННОЕ ТУАЛЕТНОЕ МЫЛО ВЫСШАГО ДОСТОИНСТВА
ПРОДАЕТСЯ ВЕЗДѢ
1/1 кус. 50 к. 1/2 кус. 30 к.
Золотая медаль Лондонъ 1893 г.
Главный складъ у Г. Ф. Юргенсъ, Москва
(М. 5195) 57. 24—14

ՀՈՆՈՐՐԷԻ (ՏՐԻՊՊԵՐ) ԴԷՄ
ՆՈՐ-ՄԻՋՈՑ
„SALO—ՊԻՋԻԼԻՆ“
ներգործում է արագ և արմատականապէս, և բժիշկների վկայութեամբ համարվում է լաւն հասատուն միջոց։ Գործածելու ձևանարկը կցված է արկղիկին։ Իսկականը մետաղեայ արկղներում, հատը՝ 1 ր. և 1 ր. 80 կ.։
Միաժամանակ լաւ է ներգործում թէ սուր եւ թէ յարատեւ բնոյթ ունեցող դէպքերում եւ կարճ ժամանակի ընթացքում վերացնում է ամենայամառ ընացք։
ՊԱՀԵՍՏ՝ Петербургъ, Разъѣзжая ул., № 7, аптека В. Конгейма.
Ուղարկվում է վերադիր վճարով։ Ճանապարհածախսը պօստային սակագնով։
Գտնվում է Կովկասեան Ընկերութեան Դեղային Ապրանքների վաճառանոցում։
(Կ.) (П.12474) 0 34

„ԿԱՎԿԱԶՍԿԱՅԱ“
կայարանին (Վլադիկավկազի երկաթուղի) կից
ՌՕՄԱՆՕՎՍԿԻ Խուտօրի համար հարկաւոր է
ՄԻ ՀԱՅ ՔԱՀԱՆԱՅ
միջնակարգ կրթութեամբ, տեղիս հայ աղօթատան համար, որի ծխերի թիւը լինելու է ոչ պակաս քան 55 տուն, բացի մի քանի գիւղերից, որոնք դարձեալ պատկանում են այս կենտրոնին։
Ցանկացողներին խնդրվում է դիմել հետևեալ հասցէով.
Хуторъ Романовскій (Куб. обл.). Ктитору Армянской церкви Налчаджіеву.
(Կ.) 908. 4—3

ԼՈՅՍ ՏԵՍԱՒ
„ՕՐՄԱՆԵԱՆ ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ՑՈՒՑԱՐԱՐԸ“
Նախորդ պատրիարք սրբազան Օրմանեանի լուսատիպ պատկերը իր կենսագրականով, գրական արտադրութիւններով ու խորհրդանշաններով, գրեթէ 50 սանտիմէտր թղթի մեծութեան վրայ։
Գործը գեղարուեստական, պարունակութիւնը հրահանգիչ, տեսքը հրապուրիչ։
Գինն է 70 սանտիմ. Բուլղարիոյ և արտասահմանի համար փօսթի ծախքով 80 սանտիմ, իսկ Ռուսաստանի համար 30 կոպէկ (փօսթով)։ Ռուսաստանի մեր ընդհանուր գործակալն է արժ. տէր-Կարապետ քահ. Մալխասեան, Բաթում։
Իսկ Բուլղարիոյ և արտասահմանի ազգայներ կրնան դիմել ուղղակի իր հեղինակին. Արամ Սահակեան, Ուլիցա Բրէսլավ, Ֆիլիպօպոլ. Բուլղարիա։
(Օ. Մ.) 948. 4—3

ԱԿՑԻՕՆԵՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ՔԻՄԻԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՕՐԻԱ
Իզմայլօվսկի պր., № 27.
Պարիզ 1910. ՈՍԿԷ ՄԵԴԱԼՆԵՐ Նիժնի-Նովգօր. 1896.
ԱՏԱՄԻ ԷԼԻԿՍԻՐ
ԲԱՐՁՐ ՏԵՍԱԿԻ
Շնորհիւ գուրեկան հոտի և իր մէջ պարունակող բուսական նիւթերի, Ս.-Պետերբուրգի Քիմիական Լաբորատորիայի պատրաստած ատամի էլիկսիրը դարձել է տուալէտային անհրաժեշտ մի առարկայ։
ԱՏԱՄՆԱՓՈՇԻ—ԱՏԱՄԻ ՊԱՍՏԱ
Գլխաւոր պահեստը. Кавказское Т-во Торговли Аптекарскими Товарами—Тифлисъ, Баку, Батумъ.
ЗАЯВЛЕНО ДЕПАРТАМЕНТУ ТОРГОВЛИ И МАНУФАКТУРЪ
525. 7—5



ԱՌԵՒՏՐԻ ՎԵՐՋՆԱԿԱՆ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՈՎ
ՄԻՐԻՄԱՆԵԱՆԻ
ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐԻ ԽԱՆՈՒԹԸ
Дворцовая ул. № 5.
Սրանով յայտարարում է, որ այս տարվայ ՍԵՊՏԵՄԲ. 5-ԻՑ ՄԻՆՉԵՒ ՀՈԿՏԵՄԲ. 25-Ը
ՆՇԱՆԱԿՎԱԾ Է ՎԵՐՋՆԱԿԱՆ ՎԱՃԱՌՔ
Գրամմոֆօնների, ջութակների, վիօլօնչելների, կօնտրաբասների, գիթառների, բալալայկաների, մանդօլինների, դօմբրերի, ցիտրաների, կօրնետների, ֆլէյտաների, կլարնետների, թմբուկների, ափսէների, ծնծղաների, ձեռքի և շրթնային հարմօնիաների, օկարինների, արիստոնների, պօլիֆօնների, ֆենիկ-օրգանների, կամերտօնների, ֆուտլեարների, պիւպիտրների և սրանց բազմապիսի պարագաների։
50% ԶԵՂՉՈՎ
Դաշնակ 30%, Ֆիս-հարմօնիա 35%։
Առանց սակարկութեան
Նոյն տեղում վաճառվում են խանութի պահարաններ, ստոյկաներ, զինանշան-արծիւ, ցուցանակներ, լամպաներ՝ լիւքսի և մօլնիա, կոպիրօվկայի պրէս և այլ իրեր։
(Կ.) 903. 3—3

Առեւտրի եւ Արդիւնաբերութեան Մինիստր. տնօրինութեան ներքոյ գտնվող
Տ. Մ. ՓԻԼՕՅԵԱՆԻ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ
Թիֆլիս, Միխայէլեան պր. 24/4. Տելէֆօն № 976.
Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առևտրական կրթութիւն։
Դասընթացքն աւարտողներին տրվում են ատտեստատներ։
Գործնական զբաղմունքները կատարվում են կուրսերում՝ Լօնդօնի Pitman և Պարիզի Pigier դպրոցների ձևով կազմակերպված Muster. Comptoir-ում։ Նիւթերն առնվում են ռէալ կեանքից. Առարկաներն են. ա) պարտադիր. 1) Հաշւապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրանս., ամերիկական, բանկային և գործարանական). 2) Առևտրական թւաբանութիւն. 3) Քաղաքատնտեսութիւն. 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնադրութիւն). 5) Առևտրական թղթակցութիւն. 6) Թւաբանութիւն համրիչի վրա. 7) Վայելչագրութիւն, արագագրութիւն (ամենավատ ձեռքի ուղղումն). բ) ոչ պարտադիր. 1) Օտար լեզուներ. 2) սղագրութիւն. 3) դակտիլօգրաֆիա (ռեմինգտօն և այլ.) և 4) առևտր. թղթակցութիւն օտար լեզուներով։ Զբաղմունքները կատարվում են և զատ-զատ։ Բացվում է կանանց յատուկ բաժանմունք։ Ունկնդիրների թիւը սահմանափակված է։ Պարապմունքների սկիզբը սեպտ. 15-ին։ Ունկնդիրների ընդունելութիւնը սեպտ. 1-ից առ. 10—12 և եր. 4—7 ժամ։ Ծրագիրը և կանոններն ուղարկվում և տրվում են ձրիաբար կուրսերի շէնքերում։
(Չ.ու.կ.) 861. 0—13 Տ. ՓԻԼՕՅԵԱՆ

Типографія канцеляріи Намѣстника Его Императорскаго Величества на Кавказѣ, Лорисъ-Меликовская улица, домъ казенный.